

ՊԱՏՄՈՒԹԻՆ ԿԵՐՏԵԼՈՎ
 ՊԱՐԱՔ ՕՊԱՍԱ ԴԱՐՁԱԻ
 ԴԵՍՈՎՐԱՏՆԵՐՈՒ
 ՆԱԽԱԳԱՅԻ ԹԵԿՆԱԾՈՒՆ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԻՏՈՐԴՆԵՐՈՒ ԵԶՐԱՓԱԿԻՉ ՏԵՂԵԿԱԳԻՐԻ ՀԱՍԱԶԱՅՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՅԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱՐԺԵԶՐԿՈՒԵՑԱՆ



Ամերիկայի նախագահի թեկնածու Պարաֆ Օպամա

Հարաւային Տաքսիդի եւ Մոնթանայի մէջ տեղի ունեցած քուէարկութիւններով, Յունիս 3-ին աւարտեցաւ Դեմոկրատ կուսակցութեան նախնական երկարատեւ ընտրարշաւը եւ Պարաք Օպամա ստանալով իր կուսակ-

Շարք էջ 4

եԱՀԿ-ի ժողովրդավարական հաստատութիւններու եւ Մարդու իրաւունքներու Գրասենեակ (ԺՀՄԻԳ) հրապարակեց Հայաստանի նախագահական ընտրութիւններու վերաբերեալ իր վերջնական տեղեկագիրը, որ եկաւ հաստատելու թէ քուէարկութենէն յետոյ յառաջացած ինդիւրներու պատճառաւ, ընտրական ամբողջ գործընթացը արժեզրկուեցաւ:

«Թէեւ 2008-ի նախագահական ընտրութիւնները նախընտրական եւ քուէարկութեան շրջանին հիմնականին մէջ համապատասխանած են եԱՀԿ-ի պարտաւորութիւններուն եւ միջազգային չափանիշներուն, սակայն լուրջ մարտահրաւէրներ ի յայտ եկան որոշ պարտաւորութիւններու առնչութեամբ՝ մասնաւորապէս ընտրութեան հետք: ...Յուշաբերեց անբաւարար յարգանք ժողովրդավարական ընտրութիւններու հետ կապուած հիմնական չափանիշներու նկատմամբ եւ արժեզրկեց ամբողջ ընտրական գործընթացը: Յատկապէս ձայներու հաշուարկի ընթացքին ի յայտ եկան թափանցիկութեան եւ հաշուետուութեան թերութիւններ, իսկ բողոքարկման



գործընթացները լիարժէք արդիւնաւէտ չէին», - ըստ իր տեղեկագիրին մէջ:

Ըստ ԺՀՄԻԳ-ի տնօրէն Քրիսթիան Շթրոնհայլի, Հայաստանի մէջ առկայ իրաւական հիմքեր՝ ժողովրդավարական ընտրութիւններ կազմակերպելու համար, իսկ զեկոյցին մէջ առանձնացուած թերութիւնները կը ծագին գոյութիւն ունեցող օրէնքներու եւ կանոններու արդիւնաւէտ եւ անկողմնակալ գործադրման ընթացքին վճռակալութեան պակասի հետեւանքով:

ԺՀՄԻԳ-ի զեկոյցին մէջ ներկայացուած են յստակ առաջարկութիւններ Հայաստանի ընտրական համակարգի բարեփոխման ուղղութեամբ՝ ներառեալ ընտրական

գործընթացներուն հասարակական վստահութեան պակասի հետ կապուած միջոցառումներ՝ բոլոր քաղաքացիներու համար ուժի գործադրումէ եւ ահաբեկումէ զերծ քուէարկութիւն ապահովելու, ինչպէս նաեւ պետական կառուցներու եւ իշխող քաղաքական կուսակցութեան միջեւ յստակ սահմանազատում հաստատելու համար:

Մայիսի 30-ին հրապարակուած տեղեկագիրի նկատմամբ Համաժողովրդական Շարժումի գրասենեակը հրապարակեց հետեւեալ յայտարարութիւնը:

«ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիտորդական առաքելութիւնը հրապարակեց Հայաստանում 2008թ. նախագահական ընտրութիւնների վերջնական զեկոյցը: Դրանից վերջապէս հանուած է զեկոյցից զեկոյց թափառող եւ անցած ընտրութիւններն ըստ էութեան լեգիտիմացնող «ընտրութիւնները հիմնականում համապատասխանում էին միջազգային ընդունուած չափորոշիչներին»՝ չարաբաստիկ ձեւակերպումը: Վերջնական գնահատականը այժմ առաւել համապատասխան

Շարք էջ 4

ՀԱԶԱՐԱԻՈՐՆԵՐ ՎԱՅԵԼԵՑԻՆ «ԶԵՄԻՐԻԷ» ՕՓԵՐԱՅԻ ՆԵՐՎԱՅԱՑՈՒՄԸ ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍԻ ՄԵՋ



Տեսարան մը «Զեմիրէ» օփերայի ներկայացումէն

Անցնող շաբաթավերջին Լոս Անճելըսի մէջ ներկայացուեցաւ Պոլսահայ մեծ երգահան Տիգրան Զուխաճեանի «Զեմիրէ» օփերան, բարձրորակ արուեստի վայելք մը շնորհելով հազարաւորներու, որոնք երեք օրերու վրայ եկան լեցնելու «Փասատինա Սիվիլք Օտիթորյում»-ի հսկայ սրահը:

Հ.Բ.Ը.Մ.-ի Արտաւազդ թատերախումբի եւ «Լարք» երաժշտական ընկերակցութեան համատեղ ջանքերով կարելի եղած էր Տիգրան Զուխաճեանի վերջին օփերան հանդիսացող «Զեմիրէն» հրամցնել հայ հասարակութեան,

անոր առաջին բեմադրութենէն (Ֆրանսերէն լեզուով) աւելի քան հարիւր տարիներ ետք:

Այս իրադրութեամբ գլխաւոր դերակատարները հանդիսացան երգահան ու խմբավար Վաչէ Պարսումեան եւ վաստակաւոր դերասան ու բեմադրիչ Գրիգոր Սաթամեան:

Բոլոր ելոյթներու աւարտին ներկաները յոտնկայս ու երկարատեւ ծափողջոյններով իրենց գնահատանքը կ'արտայայտէին բացառիկ ներկայացման համար:

Տեսնել նաեւ էջ 7-ի նիւթը:

ՏԵՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆ ՊԻՏԻ ԳԼԽԱԻՈՐԷ ՅՈՒՆԻՍ 20-Ի ՀԱՆՐԱՅԱԲԱՔԸ

Լեւոն Տէր-Պետրոսեանի խօսնակ Լեւոն Զուրաբեան Յունիս 3-ին լրագրողներուն յայտնեց, Հայաստանի առաջին նախագահի ներկայութեամբ Յունիս 20-ին Ազատութեան Հրապարակի վրայ տեղի կ'ունենայ Համաժողովրդական Շարժման հանրահաւաքը, աւելցնելով որ, իշխանութիւնները իրական քայլեր չեն կատարած 1609 բանաձեւի պայմանները բաւարարելու համար եւ ընդհակառակը, աւելի ուժեղացուած են ճնշումները ընդդիմութեան հանդէպ:

«Հաշուի առնելով ԵՆԽՎ 1609 բանաձեւի պահանջների նկատմամբ իշխանութիւնների ցինիկ արհամարհանքը, ինչպէս նաեւ դրանց կատարման համար բանաձեւում նախանշուած ժամկետի լրացումը՝ Համաժողովրդական Շարժումը որոշել է Յունիսի 20-ին Ազատութեան Հրապարակում անցկացնել համահանրապետական հանրահաւաք, որի ընթացքում կ'ամփոփուի վերոյիշեալ պահանջների կատարման ընթացքը եւ կը քննարկուեն ժողովրդի անելիքները երկրում հիմնարար ժողովրդավարական ազատութիւնների վերականգնման ուղղութեամբ», - Համաժողովրդական Շարժման յայտարարութեանէն հատուած ընթերցեց Լեւոն Զուրաբեան:

Համաժողովրդային Շարժումը նաեւ կ'առաջարկէ գործող իշ-

խանութիւններուն, ծայրայեղական դրսեւորումները կանխելու համար նշանակել ոստիկանութեան եւ քաղաքապետարանի աշխատակիցներ, որոնք Շարժման անդամներու հետ միասին հսկեն հանրահաւաքի բնականոն ընթացքը:

Լեւոն Զուրաբեան վստահ է, որ իշխանութիւնները չեն կրնար անվերջ մերժել հայ ժողովուրդի հանրահաւաք կայացնելու հիմնարար իրաւունքներէն մէկը: Ան յոյս չայտնեց, որ իշխանութիւնները հասկցած են, որ երկրորդ Մարտի 1 չի կրնար ըլլալ, Մարտի 1-ը պիտի չմոռացուի եւ չներուի:

Լեւոն Զուրաբեան անգամ մը եւս յայտարարեց, որ ընդդիմութիւնը պատրաստ է երկխօսութեան, եթէ ընդամէնը կատարուի ԵՆԽՎ բանաձեւի կէտերէ մէկը՝ ազատ արձակուին բոլոր քաղաքական բանտարկեալները. «Մենք յաջորդ օրը պատրաստ ենք նստել կլոր սեղանի շուրջ եւ իշխանութիւնների հետ քննարկել ճգնաժամից դուրս գալու ելքերը»:

Ինչ կը վերաբերի երկրէն ներս ստեղծուած իրավիճակին, ապա Զուրաբեան ըսաւ. «Երկրի ճգնաժամն այնքան խորն է, որից հնարաւոր է դուրս գալ միայն արտահերթ խորհրդարանական եւ նախագահական ընտրութիւնների միջոցով»:

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

ՀԱՐԻՐ ՕՐՈՒԱՅ ՄԵՆՈՒԹԻՒՆ

Որեւէ մէկը չի շո՞ւմ է, թէ երբ է նախագահ «ընտրուել» Սերժ Սարգսեանը: Եթէ Երեւանի փողոցներում այսպիսի հարցում անցկացուի, հարցուածների 90 տոկոսը կը պատասխանի, որ Սերժ Սարգսեանը նախագահ է «ընտրուել» Մարտի 1-ին: Այս սխալը հոգեբանական ճշգրիտ բացատրութիւն ունի. ժողովուրդը գիտի, որ նա նախագահի աթոռին տիրացել է ժողովրդի արեան վրայով, արիւնը թափուել է Մարտի 1-ին, հետեւաբար՝ շատերը ենթադրեցին ինչն է ինչ Մարտի 1-ն էլ համարում են Սերժ Սարգսեանի «ընտրուելու» օրը:

Իրականում դա տեղի է ունեցել Փետրուարի 19-ին, ու փաստօրէն, երէկ Սերժ Սարգսեանի «նախագահութեան» հարիւրերորդ օրն էր: Ի՞նչ է տեղի ունեցել այդ հարիւր օրերի ընթացքում: Իհարկէ, բոլորը հասկանում են, որ ռեժիմը շուտաւարժ ու խուճապահար է, եւ այդ վիճակում նրանից որեւէ տրամաբանական գործողութիւն ակնկալելն անիմաստ է: Եւ այնուամենայնիւ, փորձենք հասկանալ, թէ այս ընթացքում ի՞նչ նշանակալից իրադարձութիւններ են տեղի ունեցել:

Արտաքին քաղաքականութեան բնագաւառում միակ կարեւոր իրադարձութիւնը եղել է այն, որ Հայաստանի արտգործնախարարը մեկնել է Մոսկուա, որպէսզի քննարկի «Հայաստանի եւ Ռուսաստանի արտաքին քաղաքականութիւնը համաձայնեցնելու հարցը»: Եթէ որեւէ մէկը չի հասկանում, թէ ինչ է նշանակում այս բացարձակ խայտառակութիւնը, կարող ենք բացատրել. Ռուսաստանը, բնականաբար, իր արտաքին քաղաքականութիւնը Հայաստանի հետ չի համաձայնեցնելու: Մենք ենք մեր քայլերը համաձայնեցնելու նրա հետ: Պարզ ասած, ռուսները մեր նորանշանակ արտգործնախարարին կանչել են, որպէսզի «ինստրուկտաժ անեն»: Համաձայնուէ՞ք՝ որեւէ անկախ պետութեան համար աւելի նուաստացուցիչ վիճակ դժուար է պատկերացնել:

Իսկ ի՞նչ է տեղի ունեցել ներքաղաքական դաշտում: Անցած հարիւր օրերի ընթացքում տեղի է ունեցել հետեւեալը. Մարտի 1-ին ռեժիմի կառուցները կրակել են ժողովրդի վրայ, յետոյ հանրահաւաքներն ու ցույցերն արգելող օրէնք է ընդունուել, յետոյ ոստիկանական ռեժիմը շրջապատել են բոլոր այն վայրերը, որտեղ հնարաւոր են «մարդկանց ինքնաբուխ կուտակումներ» եւ վերջ: Ուրիշ բան տեղի չի ունեցել: Քիչ էր մնում մոռանալինք՝ Սերժ Սարգսեանը յայտնի չէ թէ ում յանձնարարել է յայտնի չէ թէ ինչ նպատակով ստեղծել յայտնի չէ թէ ինչ ֆունկցիաներ ունեցող հասարակական պալատ:

Իսկ ահա տնտեսական կեանքում տեղի են ունեցել նշանակալից իրադարձութիւններ: Նախ՝ թանկացել է գազը: Ընդ որում, թանկացել է «ընտրութիւններից» անմիջապէս յետոյ: Երկրորդ՝ համատարած թանկացումները գերազանցել են հնարաւոր բոլոր ռեկորդները: Յայտարարուել է, որ հայ ժողովուրդը պիտի զբաղուի եզրիպատարներն ցանելով: Նաեւ նոր աշխատատեղեր են բացուել: Ինչպէս կ'ասէին խորհրդային տարիներին, «չհազարծման է յանձն-

ուել» «Շանգրի-Լա» խաղատունը: Առաջիկայում շահագործման կը յանձնուի եւս մէկը: Մաքսակէտերում խուճապ է. կաշառքը զգուշօրէն են վերցնում: Ընդդիմադիր հայեացքներ ունեցող գործարարներին պատկանող ձեռնարկութիւնները մէկը միւսի հետեւից փակուում են: Բաղդասարով Միշան վաճառում է ունեցած-չունեցածը: Պաշտօնապէս յայտարարում է, որ տնտեսական ոլորտում մեր միակ յոյսը սփիւռքն է:

Մշակույթի ոլորտում մեծ յաջողութիւն ենք ունեցել: Մի հատ: Դա տեղի է ունեցել սփիւռքի շնորհիւ: Այլ նուաճումներ առայժմ չկան: Արտագաղթի տեմպերը կտրուկ աճել են, բայց նաեւ ներգաղթի միտումներ են նկատուում (Սաշիկ Սարգսեանի տեսքով):

Ահա եւ ամբողջը: Եթէ ուշադիր ուսումնասիրենք այս ցանկը, պարզ կը դառնայ, որ ռեժիմը բացարձակապէս ոչ մի բանով չի բացառում: Ժիշդ այսպիսի վիճակում սովորաբար յայտնուում է շունը՝ ոսկոր փախցնելուց յետոյ: Քանի դեռ վտանգ կայ, որ ոսկորը կը խլեն, շունը ոսկորը պահում է ատամների մէջ, բայց չի համարձակուում ուտել, որպէսզի յանկարծ ուշադրութիւնը չչեղուի: Պարզապէս քարացած կանգնում է, մինչեւ վտանգն անցնի: Ու որ կողմից վտանգ է գգում՝ շրջում է ու այդ ուղղութեամբ գում ուտում:

Անկեղծ ասած, «հարիւր օրը» գում ուտող դիմաւորելն էլ մի բան է ի:

ԳՐԻԳՈՐ ՈՍԿԱՆԵԱՆ
«ԶՈՐՐՈՐԴ ԻՇՆԱՆՈՒԹԻՒՆ»

ՏԻՄԱՐՈՒԹԵԱՆ ԿԱՆԽԱՎԱՐԿԱԾ

Հասարակութեան ատելութիւնն ու արհամարհանքը վայելող որոշ իշխանաւորներ եւ իշխանաստեղծներ յուսահատ փորձեր են անում լուանալ Մարտի 1-ին հեղուած արեան հետքերը, արդարացին էլ իրական յանցագործներին եւ կատարուածի մեղքը բարդել անմեղ մարդկանց վրայ:

Որպէս կանոն, նրանց այդ փորձերը մերկապարանոց ամբաստանութիւններ են: Նրանց ասածների մէջ չկայ տրամաբանութիւն, նրանք չունեն որեւէ փաստարկ՝ հիմնաւորելու իրենց տեսակէտը, գնահատականը, միտքը: Դա չեն կարողանում անել ոչ դատարաններում՝ խեղդատակութիւնների վերածուած նիստերի ժամանակ, ոչ էլ իրենց ազրեսիվ հոգեխանգարմունքի պահին տուած հարցազրոյցներում ու հեռուստատեսութիւններում:

Վերջերս նրանցից ամենաինտելեկտուալները շրջանառութեան մէջ են դրել տիմարութեան հերթական կանխավարկածը, որը հնչում է այսպէս. «Մարտի 1-ը ձեռնտու էր Լեւոն Տէր-Պետրոսեանին»:

Նման տիմարութիւններին պատասխանելն, անշուշտ, պարտադիր չէ, բայց նկատի ունենալով ազրեսիալի եւ բթամտութեան դրսեւորմանը գուզահեռ ընթացող դատավարութիւնները, քաղաքաշինաւորներին պատանդ պահելու՝ իշխանութիւնը բռնազաւթածների վճարակաւութիւնը, հարկ ենք համարում արձագանքել անհեթեթ ամբաստանութեանը:

Ենթադրենք, թէ Մարտի 1-ը իսկապէս ձեռնտու էր Լեւոն Տէր-

ՄՈՒՐՈՒԹԻՒՆ

Իշխանութեան ներկայացուցիչները եւ նրանց քարոզչութեան մեկնաբանութիւններից այն տպաւորութիւնն է ստեղծուում, որ մեր դեկավարները, այնուամենայնիւ, մինչեւ վերջ չեն ըմբռնում ներկայիս հասարակական տրամադրութիւնները, եւ այդ մոլորութիւնն անկեղծ է, ձեւական չէ: Նախ՝ նրանք իսկապէս հաւատացած են, որ ժողովրդի ընդվզումը պայմանաւորուած է Տէր-Պետրոսեանի անձով: Այսինքն՝ հրեաները եւ մասունները առաջին նախագահի օգնութեամբ կարողացան ինչ-որ զանգուածային հիպոսի սեանսներ անցկացնել, որի արդիւնքում խախտուեց երկրի բնականոն ընթացքը: Այդ սխալ ենթադրութիւնից ելնելով՝ իշխանութիւնները գնում են «լուծումների» իրենց ճանապարհով. տասնեակ անմեղ մարդկանց բանտերում պահելով՝ շանտաժել ընդդիմութեան առաջնորդին, որպէսզի նա «ընդունի ընտրութիւնների արդիւնքները» եւ «գնա երկխօսութեան»: Այդ ճանապարհը փակուղային է ոչ միայն այն պատճառով, որ առաջին նախագահն իր բնաւորութեամբ յամառ է եւ շանտաժի հետեւանքով տեղի չի տայ: Շատ աւելի էական է, որ եթէ նոյնիսկ այդ մարտավարութիւնը յաջողութեամբ պսակուի, միեւնոյն է՝ դա իրավիճակը չի լիցքաթափի: Ենթադրենք, Տէր-Պետրոսեանն ընդունում է ներկայիս նախագահի լեզուի մտածելակերպը եւ «չինչի երկխօսութիւն է սկսում», ենթադրենք նոյնիսկ, որ առաջին եւ երրորդ նախագահներն ամբողջ օրը գրկախառնուած ման են գալիս, դա կարող է զսպել ժողովրդի դժգո-

հույսեան այլքը: Հաւանաբար՝ ճիշդ հակառակը. դա մարդկանց է՛լ աւելի կը գրգռի, եւ դժգոհութեան մի թիրախի փոխարէն նրանք կուենան երկուսը:

Իշխանութեան երկրորդ սխալ ենթադրութիւնն այն է, որ այդ դժգոհութեան արմատները սոցիալական են: (Նկատենք, որ այդ բառը չեմխորհրդային երկրներում մեկնաբանում են նեղ իմաստով՝ «սոցիալականը» մեզանում մօտաւորապէս «ստամոքսայինի» հոմանիշն է): Այստեղ, ըստ ամենայնի, գործում է խորհրդային կարծրատիպը. «մի խումբ թափթփուկներ շահարկում են մեր ժամանակաւոր դժուարութիւնները»: Բայց այդ բացատրութիւնն էլ չափազանց պարզունակ է: Միանգամայն կուշտ եւ նիւթապէս ապահով մարդիկ էլ են դժգոհ, որ ստիպուած են ամէն քայլափոխի չինովնիկներին կաշառք տալ, որ արժանանում են պետական մարմինների քամահրանքին եւ կեղեքմանը, որ իշխանութեան հովանաւորեալներ յանցագործութիւններն անպատիժ են մնում, որ, վերջապէս, իրենց կամքը, որն արտայայտուած է քուէաթերթիկը տուփի մէջ գցելիս, ցինիկաբար արհամարհուում է:

Ներկայացնել դա որպէս «լեւոնականների» եւ «սերժականների» հակամարտութիւն, նշանակում է չհասկանալ դժգոհութեան բուն պատճառները: Մարդկանց, մեծ հաշուով, ոչ Լեւոնն է պէտք, ոչ էլ Սերժը. նրանց պէտք է նորմալ, արժանապատիւ կեանք, եւ այդ պահանջն ամենեւին չի սահմանափակում նիւթական կարիքներով: Իշխանութիւնը պարզապէս պէտք է հասունանայ՝ այդ պահանջը խորապէս ըմբռնելու համար:

ԱՌԱՌՕՏ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈՒԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ
ԿՈՒՄԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕԲԹ. ԱՐՇԱԿ ՂԱԶԱՆՃԵԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ
ԳԱՐԻԷԼ ՍՈՒՆՅԵԱՆ՝
ՍԱՅԱԿ ԹՈՒԹԵԱՆ
ՎԱԶԳԵՆ ԽՈՏԱՆՅԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ՂԱԻԹԵԱՆ

Հեռ. (626) 797-7680
Ֆաքս. (626) 797- 6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

MASSIS Weekly
Organ of the Armenian Social
Democratic Hunchakian Party of
Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, Canada \$60 (Second
Class), \$75.00 (Air Mail)
Overseas \$85.00 (2nd Class Mail),
\$125.00 (Air Mail).
All payments must be made in
US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104

ՀԱՅԱՍՏԱՆ

ԼԵՒՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆ. «ԿԱՆԳՆԷՔ ՄԻՆՉԵՒ ՎԵՐՋ»

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: Հայաստանի առաջին նախագահ, Համաժողովրդական Շարժման նախաձեռնող եւ առաջնորդ Լեւոն Տէր-Պետրոսեանը, դիմելով իր աջակիցներին, յորդորեց «Կանգնել մինչեւ վերջ»:



Լեւոն Տէր-Պետրոսեան Մարդարայատ կատրած այցի ընթացքին

«Չպիտի յոգնէք», - Մարդարայատի Յուշահամալիրում իր կողմնակիցներին ասաց Տէր-Պետրոսեանը: - «Պէտք է պայքարէք այնքան ժամանակ, մինչեւ համէք նպատակին: Սա իմ ինդիրը է: Բացարձակապէս իմ ինդիրը է, ինձ համար է: Ինչ որ անելու էք, ձեր երեխաների համար էք անելու: Եթէ այս գիտակցութիւնը չունեցաք, մենք շատ փորձանքների կը գանք... Կանգնէք մինչեւ վերջ»:

Հայաստանի Սոցիալ-Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան ատենապետ Լիւդմիլա Մարգարեանը, ով Մարդարայատում ուղեկցում էր Լեւոն Տէր-Պետրոսեանին, «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում փոխանցեց, որ Երեւանի քաղաքապետարանը մերժել է հանրահաւաք անցկացնելու վերաբերեալ Համաժողովրդական Շարժ-

մանն աջակցող քաղաքական ուժերի եւ հասարակական կազմակերպութիւնների 50-ից աւելի դիմումները:

Մարգարեանը կարծիք յայտնեց, որ իշխանութիւնները «կոնկրետ քայլեր չեն անում» ԵՆԽՎ-ի՝ Հայաստանին վերաբերող բանաձեւի պահանջներն իրականացնելու ուղղութեամբ. - «Առ այսօր ոչինչ չի արուել: Ինչ արուել է՝ իմիտացիա է»:

«Եւրոպացիները շատ լաւ գիտեն ճշմարտութիւնը: Խնդիրն այն է, թէ որքանով է իրենց յարմար ճշմարտութիւնը տեսնել», - յաւելեց նա:

ԱՇԽԱՏԱՆՔԻՑ ԱԶԱՏՈՒԾ ԴԻՎԱՆԱԳԵՏՆԵՐԻ ՀԱՅՑԸ ՄԵՐԺՈՒԵՑ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: Վարչական դատարանը մերժեց արտգործնախարարութեան 4 նախկին աշխատակիցների հայցը ընդդէմ Հայաստանի արտաքին գործերի նախարարութեան՝ համապատասխանաբար մերժելով նաեւ նախկին պաշտօններում վերականգնելու եւ կրած վնասները փոխհատուցելու պահանջը:

Արտգործնախարարութեան աշխատակիցներ Վլադիմիր Կարապետեանը, Մարթա Ալվազեանը, Կարինէ Աֆրիկեանը եւ Առաքել Սեմերջեանը նախկին նախարար Վարդան Օսկանեանի հրամանով հեռացուել էին աշխատանքից, երբ նախագահական ընտրութիւններից յետոյ՝ Փետրուարի 24-ին, հանդէս էին եկել յայտարարութեամբ՝ դատապարտելով ընտրակեղծիքները: Յայտարարութիւնը դիտուել էր իբրեւ «Դիւանագիտական ծառայութեան մասին» օրէնքի խախտում:

Վարչական դատարանը գտաւ, որ արտգործնախարարութեան այդ աշխատակիցները իսկապէս խախտել են «Դիւանագիտական ծառայութեան մասին» օրէնքը, քանի որ «քաղաքական յայտարարութիւն են

արել, ինչի իրաւունքը չունէին»: Դատավճռի հրապարակումից յետոյ արտգործնախարարութեան նախկին խօսնակ Վլադիմիր Կարապետեանը «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում ասաց, որ արդար չի համարում դատավճիռը, եւ որ իրենց հայցը մերժուել է «արտգործնախարարութեան ճնշման ներքոյ»: - «Իմ կարծիքով, դատարանը տեղի տուեց այն ճնշումներին, որ դատարանի վրայ վատահաբար գործադրեցին գործադիր իշխանական մարմինները, մասնաւորապէս արտգործնախարարութիւնը»:

«Շարունակում ենք պնդել, որ դա (իրենց յայտարարութիւնը) քաղաքացիական դիրքորոշում է եղել, եւ հիմնական միտքը եղել է այն, որ մենք կոչ ենք արել այն ժամանակուայ լարուած իրավիճակում բոլոր կողմերին ձեռնպահ մնալ ուժի կիրառումից», - յաւելեց նա:

Կարապետեանը ասաց նաեւ, որ պատրաստուում է բողոքարկել դատարանի վճիռը, սակայն վերջնական որոշումը կը կայացնի գործընկերների հետ խորհրդակցելուց յետոյ:

ՊԱՏԳԱՄԱԻՈՐՆԵՐՆ ԱՌԱՋԱՐԿՈՒՄ ԵՆ ԿՐԿՆԱՊԱՏԿԵԼ ԻՐԵՆՑ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԵՐԸ

Իշխանական կոալիցիան ներկայացնող 4 կուսակցութիւնների մի քանի պատգամաւորներ Մայիսի 26-ից Ազգային ժողովում շրջանառութեան մէջ են դրել օրինագիծ, որով նախատեսուում է կրկնապատկել օրէնսդիր, գործադիր եւ դատական իշխանութեան մարմինների ղեկավար աշխատողների պաշտօնեային դրոյքաչափերը:

Այս փոփոխութիւնների ընդունուելու դէպքում երկրի նախագահը ամսական կը ստանայ 800 հազար դրամ աշխատավարձ՝ ներկայիս 400 հազար դրամի փոխարէն: Ազգային ժողովի նախագահը, երկրի վարչապետը, Սահմանադրական Դատարանի նախագահը կը ստանան 720-հազարական դրամ՝ ներկայիս 340-հազարական դրամի փոխարէն: Խորհրդարանական յանձնաժողովների նախագահներն ու բոլոր պատգամաւորները կը ստանան 600-հազարական դրամ ամսական աշխատավարձ՝ ներկայիս 300 հազարի փոխարէն, նախարարներն ու Երեւանի քաղաքապետը՝ նոյնպէս 600-հազարական դրամ:

ԱՐՍԷՆ ԽԱՌԱՏԵԱՆԻ ԴԵՍ ՅԱՐՉԱԿՈՒՄԸ ՍԴՅԿ-Ն ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՇՈՒԵՅԱՐԴԱՐ Է ՀԱՄԱՐՈՒՄ

ԵՐԵՒԱՆ, 29 ՄԱՅԻՍԻ, ՆՈՅՆԱՆ ՏԱՊԱՆ: «Սկսել ա» երիտասարդական շարժման ղեկավար Արսէն Խառատեանի դէմ նախօրէին կատարուած յարձակման կապակցութեամբ յայտարարութեամբ հանդէս է եկել Սոցիալ-Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան վարչութիւնը: Յայտարարութիւնում, մասնաւորապէս նշուում է.

նում Ազգային Անվտանգութեան հարցերով նախագահի խորհրդական) Յովհաննէս Գալաշեանի («Իսկական Իրաւունք» թերթի գլխաւոր խմբագիր), Սուրէն Աբրահամեանի (նախկինում Երեւանի քաղաքապետ), Նարեկ Գալստեանի (Սոցիալ-Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան «Սարգիս Տիրունի» Ուսանողական Միութեան նախագահ) հետ:

«Վրդովմունքով իմացանք, որ յարձակում է տեղի ունեցել «Սկսել ա» երիտասարդական շարժման ղեկավար Արսէն Խառատեանի վրայ՝ մի պայծառ երիտասարդի, ով համարձակութիւն է ունեցել պայքարել յանուն արդարութեան, օրինականութեան եւ երկրի ապագայի: Ակնյայտ է, որ սա հերթական քաղաքական հաշուեյարդարն է, երբ իշխանութիւնները սպառել են օրինական միջոցներով ճնշելու հնարաւորութիւնները եւ դիմում են կրիմինալ գործողութիւնների: Այսպէս է եղել Աշոտ Մանուչարեանի (ընդդիմադիր քաղաքական գործիչ, նախկին

Ոչ մի յանցագործ առ այսօր չի յայտնաբերուել, քանզի այդ գործողութիւնների հեղինակն ինքը՝ ռեժիմն է: Միանշանակ անյոյս եւ անհեռանկար համարելով ռեժիմի կողմից իշխանութիւնը պահպանելու նպատակով որդեգրած այս գործելակերպը՝ Ս.Գ.Հնչակեան կուսակցութիւնն իր անվերապահ սատարումն է յայտնում «Սկսել ա» եւ միւս այն երիտասարդական շարժումներին, որոնք պայքարում են Հայաստանը խորը ճահճից դուրս բերելու եւ իրաւական, ժողովրդավար, ազատ, արդար Հայաստան ձեւաւորելու համար»:

ՌՈՒԲԷՆ ՅԱԿՈԲԵԱՆ. «ԴԵՍ ԵՄ ԱՆՍԿԶՐՈՒՆՔԱՅՆՈՒԹԵԱՆԸ»

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: «Սկզբունքային անհամաձայնութիւններ ունեւ կուսակցութեան կողմից վերջին մէկ տարուայ ընթացքում վարուող քաղաքականութեան վերաբերեալ», - «Ազատութիւն» ռադիոկայանին տուած հարցազրոյցում յայտարարեց Դաշնակցութիւնից հեռացուած Ռուբէն Յակոբեանը:



Ռուբէն Յակոբեան

«Դա վերաբերում է ե՛ւ նախագահական ընտրութիւններին մասնակցութեան ձեւին եւ բովանդակութեանը, ե՛ւ նախագահական ընտրութիւններից յետոյ ծաւալուող գործունէութեանը», - ընդգծեց Յակոբեանը՝ յաւելելով. - «Դէմ եմ անսկզբունքայնութեանը: Որեւէ քաղաքական կուսակցութեան անսկզբունքայնութիւնը ինձ համար անհասկանալի է»:

յում չես, նշանակում է՝ Տէր-Պետրոսեանի հետ ես»: - «Նոյնը մէկ այլ ֆորմատով հետեւեալն է, որ հայ ժողովուրդը բաժանուած է երկու հատուածի՝ մէկը իշխանութեան հետ է, միւսը՝ Լեւոն Տէր-Պետրոսեանի: Շատ ընդգծուած է գոիստական մօտեցում է, որը, անկեղծ ասած, ձեռնտու է երկու կողմին»:

«Այսինքն՝ կոալիցիային միանալը անսկզբունքայնութիւն է», - այս հարցին նախկին դաշնակցական գործիչը արձագանքեց. - «Ինձ համար չափից դուրս անհասկանալի էր, որ ընդդիմադիր դաշտը ամբողջութեամբ յանձնուեց Լեւոն Տէր-Պետրոսեանին: Եթէ մենք խօսում ենք իսկապէս պետութեան դիմադրի, ռիթմիկ զարգացման համար, քաղաքական դաշտի կայունութեան համար, պէտք է որ ապահովել այդ դաշտում ընդդիմադիր կեցուածքի, ընդդիմադիր ճշգրիտ պահուածքի կուսակցութիւններ: Նա անընդունելի է համարում այնպիսի մօտեցումը, ըստ որի՝ «եթէ կոալիցիա-

Այն, որ երկու այդպիսի բեւեռ կայ, ըստ Ռուբէն Յակոբեանի, չի նշանակում, որ ամբողջ հասարակութիւնը միացուած է դրանցից որեւէ մէկին. - «Ես հաստատապէս կարող եմ ասել, որ ոչ պակաս՝ ե՛ւ քանակով, ե՛ւ առաւել եւս որակով, կայ զգալի մի հատուած մեր հասարակութեան, որը հենց գտնուում է այս երկու բեւեռների արանքում: Ի վերջոյ, այդ հասարակութիւնը կը կազմակերպուել եւ ինքը յանունի, ոչ թէ ընդդէմի իր խօսքը կասի այս պետութեան, մեր պետականութեան կայացման համար»:

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՆՈՐ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԸ ՆՇԱՆԱԿՈՒԵՑԻՆ

Սերժ Մարգարեանի հրամանագրերով Աղուան Վարդանեանն ազատուել է աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարի, Լեւոն Մկրտչեանը՝ կրթութեան եւ գիտութեան նախարարի, Դաւիթ Լոբեանը՝ գիւղատնտեսութեան նախարարի պաշտօնից: Նախագահի մամուլի գրասենեակի փոխանցմամբ, նոյն օրը Սերժ Մարգարեանը հրամանագրեր է ստորագրել Արսէն Համբարձումեանին աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար, Սպարտակ Սէյրանեանին՝ կրթութեան եւ գիտութեան նախարար, Արամայիս Գրիգորեանին՝ գիւղատնտեսութեան նախարար նշանակելու մասին:

Դաշնակցական երեք նախարարները հրաժարական են տուել կուսակցութեան Բիւրոյում ընտրուելու կապակցութեամբ: Ըստ որոշ պնդումների՝ սա ոչ թէ ՀՅԴ-ի, այլ Սերժ Մարգարեանի որոշումն էր՝ փոխել բոլոր նրանց, ովքեր աշխատել են Ռոբերտ Քոչարեանի հետ:

ԼՈՒՐԵՐ

ԻՇԽԱՆԱԿԱՆ ԵՒ ԸՆԴԴԻՍԱԴԻՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ ՏԵՍԱԿԵՏՆԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ ԵՆ ՅԱԿԱԴԻՐ ՄՆԱԼ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՑ»:
Մամուլի Ազգային Ակումբում կա-
յացած քննարկման ընթացքում պարզ
դարձավ, որ, մասնավորապես, Հա-
յաստանում արտահերթ ընտրու-
թիւնների անցկացնելու եւ քաղաքա-
տարկեալների առկայութեան-չառ-
կայութեան խնդիրների շուրջ իշ-
խանութեան եւ ընդդիմութեան ներ-
կայացուցիչների կարծիքները չեն
փոխուել եւ շարունակուած են հակա-
դիր մնալ:

Ազգային ժողովի նախկին փոխ-
խօսնակ Կարապետ Ռուբինեանը,
օրինակ, ասաց, որ իշխանութիւնն
ու ընդդիմութիւնը կարող են երկ-
խօսութիւն սկսել «արտահերթ նա-
խագահական եւ խորհրդարանական
ընտրութիւնների հարցի շուրջ»՝
ԵՆԽՎ-ի բանաձեւի պահանջները
կատարելուց եւ «քաղաքատարկեալ-
ներին» ազատ արձակելուց յետոյ:

«Եթէ հիմա նոր ընտրութիւն
ենք նշանակում՝ պառլամենտական
կամ նախագահական, որտե՞ղ է այն
վստահութիւնը, որ որեւէ քաղաքա-
կան ուժ, որը պարտուել է, նորից չի
բողոքարկել», - հակադարձեց Ազ-
գային ժողովում ՀՀԿ-ի խմբակցու-
թեան քարտուղար Սամուէլ Նիկո-
եանը՝ յաւելելով նաեւ, թէ նոր
ընտրութիւններ անցկացնելը կը հա-
կասի Սահմանադրութեանը:

Սրան ի պատասխան՝ ընդդի-
մութեան ներկայացուցիչները ասա-
ցին, թէ իշխանութիւնը «Սահմա-
նադրութիւնը խախտում է ամէն օր»:

«Ինչո՞ւ էք զարմանում, երբ
պահանջում ենք արտահերթ ընտ-
րութիւններ, ասում էք՝ Սահմանադ-
րութիւնը կարդացէք», - ասաց
Հայաստանի ժողովրդական կուսակ-
ցութեան ղեկավար անդամ Ռուզան

Խաչատրեանը: - «Իսկ իշխանու-
թիւնները Սահմանադրութիւնը կար-
դացե՞լ են, որ տարիներ շարունակ
ոտնահարում են այդ Սահմանադ-
րութիւնը: Ինչո՞ւ են՝ Հայաստանի
Հանրապետութեան քաղաքացիա, չեմ
կարող Ազատութեան հրապար-
կում գնալ կանգնել կամ զբօսնել:
Եթէ ուզում էք ցոյց տալ, որ իրօք
փոփոխութիւն էք ուզում անել,
ազատէք այդ Ազատութեան Հրա-
պարակը»:

Իշխանական եւ ընդդիմադիր
քաղաքական ուժերի ներկայացու-
ցիչները այսօր համաձայնութեան
եզրեր չգտան նաեւ երկրում քաղ-
բանտարկեալների առկայութեան-
չառկայութեան հարցի շուրջ: ՀՀԿ-
ի եւ «Բարգաւաճ Հայաստան»-ի
ներկայացուցիչները կրկնեցին ար-
դէն բազմիցս ասուածը, թէ՛ յանցա-
գործութիւն չկատարած անձը պա-
տասխանատուութեան չպէտք է են-
թարկուի, եւ՝ եթէ հետաքրքրութիւնը
պարզի, որ կան քաղաքատարկեալ-
ներ, ապա իրենք կը պահանջեն, որ
նրանք անյապաղ ազատ արձակուեն:

Ընդդիմադիրների կարծիքով,
սակայն, քաղաքատարկեալների առ-
կայութեան առումով «մեծ ուսում-
նասիրութիւնների» կարիք չկայ:

Ազգային ժողովի նախկին փոխ-
խօսնակ Արա Սահակեանը, օրինակ,
խորհուրդ տուեց հարցը ուղղել
նախկին քաղաքատարկեալներին. -
«Դիմէ՞ք Պարոյր Հայրիկեանին, նա
քաղաքատարկեալ է եղել, թէ՛ քրէ-
ական յանցագործ: Մեր ընկերները,
ովքեր այսօր գտնուում են բանտե-
րում, մեծամասամբ քաղաքատարկ-
եալներ են, եւ դա վկայում է այն
մասին, որ Հայաստանում ղեմով-
րատիայի վիճակը ողբալի է»:

ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱՐԺԵԶՐԿՈՒԵՑԱՆ

Շարունակուած էջ 1-էն

նեցուած է նոյն գեկոյցում արձա-
նագրուած բազմաթիւ օրինախախ-
տումներին: Դիտորդական առա-
քելութեան գեկոյցի նոր ձեւա-
կերպման համաձայն՝ թոյլ տրուած
խախտումների ամբողջութիւնն
«արժեզրկեց ընդհանուր ընտրա-
կան գործընթացը»:

«Այսպիսով՝ ԵԱՀԿ-ն ըստ էու-
թեան հրաժարուեց Հայաստանի
վերջին նախագահական ընտրու-
թիւնները լեգիտիմացնող իր նա-
խորդ գնահատականներից՝ այն,
ինչը պնդում էր Համաժողովրդա-
կան շարժումը: Սա մեր ժողովրդի
հետեւողական քաղաքական պայ-
քարի արդիւնքն է, մեր բոլորի
յաղթանակը:

Ցաւով պէտք է նշել, որ
ԵԱՀԿ-ի դիտորդական առաքելու-
թեան առաջին՝ ոչ ճշմարիտ գնա-
հատականը, որ տրուել էր քուէար-
կութեան յաջորդ իսկ օրը, ինչպէս
նաեւ այն փաստը, որ երկու շաբա-

թով յետաձգուեց, երկրորդ՝ առա-
ւել խիստ գնահատականներ պա-
րունակող գեկոյցը, անհետեւանք
չանցան: Եթէ ի սկզբանէ լինէին
օբիեկտիւ գնահատականներ, ու-
ժիմը չէր համարձակուի դիմել
սեփական ժողովրդի դէմ Մարտի
1-ին սպանդ կազմակերպելու ոճ-
րագործ քայլին:

«Այս գնահատականը, ինչ-
պէս նաեւ օրերս հրապարակուած
ԱՄՆ Պետդեպարտամենտի տարե-
կան գեկոյցը, որտեղ արձանագր-
ուեց, որ «2008 ՀՀ նախագահական
ընտրութիւնները նշանակալիօրէն
կեղծուած էին» փաստում են, որ
միջազգային հանրութիւնը, անա-
ռարկելի փաստերի ու ժողովրդի
գնալով հզօրացող ճնշման շնորհիւ
աստիճանաբար ընդունում է երկ-
րում օրինական իշխանութիւն ձե-
ւաւորելուն եւ սահմանադրական
կարգը վերականգնելուն ուղղուած
մեր պայքարի իրաւացիութիւնը:
Պայքար, որն անխուսափելիօրէն
աւարտուելու է յաղթանակով»:

ՊԱՐԱՔ ՕՊԱՍԱ ՆԱԽԱԳԱՅԻ

Շարունակուած էջ 1-էն

ցութեան համագումարի պատգա-
մաւորներու ձայներու մեծա-
մասնութեան նեցուկը՝ ապահովեց
Դեմոկրատներու թեկնածուն
դառնալու իրաւունքը:

Պարաք Օպամայի արձանագ-

ԴԵՍՈՎՐԱՏՆԵՐՈՒ ԹԵԿՆԱԾՈՒՆ

րած յաղթանակը Ամերիկայի
նախկին առաջին տիկին՝ Հիլըրի
Քլինթոնի դէմ, ոչ միայն
քաղաքական անակնկալ մըն էր, այլ
նաեւ՝ պատմական տարողութեամբ
իրադարձութիւն:

Արդարեւ՝ Օպամա դարձաւ
Ամերիկայի պատմութեան մէջ

ՀՆՉԱԿԵԱՆՆԵՐԸ ՄԻԱՑԵԼ ԵՆ ՀԱՅԱԴՈՒԼԻՆ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-
ՑԷ»: Յունիս 3-ի Առա-
ւօտեան 10:30-ից ՀՀԾ
վարչութեան գրասեն-
եակի մօտ ՀՀԾ անդամ
4 հացադուլաւորներին
միացել են նաեւ ՄԴՀԿ
անդամներ Համբար-
ձում Եղիազարեանը եւ
Գարեգին Սեղրակեա-
նը:



Ինչպէս «Ա1+»-ին
տեղեկացրեց Համբար-
ձում Եղիազարեանը՝
իրենց պահանջն է
ԵՆԽՎ 1609 բանաձեւի
պահանջների կատա-
րումը, որոնք «իշխա-
նութիւններ կոչուածները» չեն ու-
զում կատարել:

Թէ որքան նրանք կը մնան
հացադուլի մէջ, դեռ չեն որոշել:
«Ընթացքում արդէն կը տեսնենք՝
թէ առողջականի եւ այլ խնդիրնե-
րի հետ կապուած ինչպէս կը վար-
ուենք», - «Ա1+»-ի հետ զրոյցում
ասաց Համբարձում Եղիազարեա-
նը: Առայժմ հացադուլաւորներն,
իրենց ասելով, լաւ են զգում:

Հացադուլ սկսելու մասին ՄԴՀԿ
հացադուլաւորներն այսօր պատ-
րաստուած են իրազեկումներ ու-
ղարկել համապատասխան գերա-
տեսչութիւններ՝ Երեւանի քաղա-
քապետարան, Մարդու Իրաւունք-
ների պաշտպանի գրասենեակ, ՀՀ
դատախազութիւն եւ Կարմիր խաչ:

Իրաւապահ մարմիններ, նրանց
ասելով՝ տարածքում չկան, որեւի-
ցէ միջադէպ տեղի չի ունեցել եւ
յուսով են, որ չի լինի: Պատահա-
կան անցորդները մօտենում, հե-
տաքրքրուած են: «Մարդկանց այ-
սօր ամէն ինչ է հետաքրքրում:
Արդէն ունենք ձեւաւորուած քա-
ղաքացիական հասարակութիւն,
որին չի կարելի քննցնել իմիտաց-
իաներով, որոնք կատարում են
ներկայիս իշխանութիւնները բո-
լոր հարցերում», - կարծում է Եղ-
իազարեանը:

Իսկ ՄԴՀԿ ատենապետ Լիւդ-
միլա Սարգսեանի կարծիքով՝ եթէ
նոյնիսկ քաղաքատարկեալներից
մէկ-երկու հոգու այսօր ազատ են
արձակում, ապա դա ընդամէնը
խափանման միջոցը փոխելու ար-

ԲԵՌՆԱՐ ՖԱՍԻԷ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ԱՏՐՊԵՅՃԱՆԻ ՆԱԽԱԳԱՅՆԵՐԻ ԱՌԱՋԻԿԱՅ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՇԱՏ ԿԱՐԵՒՐ Է»

ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի ֆրանսիացի համանախագահ Բեռնար
Ֆասիէն «չատ կարեւոր» է որակել Հայաստանի եւ Ատրպէյճանի
նախագահների՝ շաբաթավերջին Սանկտ Պետերբուրգում կայանալիք
հանդիպումը: «Դա երկու նախագահների առաջին ճանաչողական
հանդիպումն է», - APA լրատուական գործակալութեանն ասել է նա:

Ըստ Ֆասիէի՝ նախագահների հանդիպումից յետոյ Մինսկի խմբի
համանախագահները եւ երկու երկրների արտգործնախարարները կը
շարունակեն բանակցային գործընթացը: Ֆրանսիացի համանախագահը
յոյս է յայտնել, որ հանդիպումը դրական արդիւնքներ կ'ունենայ:

Մինչ նախագահների հանդիպումը, միջնորդները Մոսկուայում
Յունիսի 5-ին հանդիպելու են Ռուսաստանի փոխարտգործնախարար
Գրիգորի Կարասինի հետ, իսկ նախագահների հանդիպումից յետոյ,
Յունիսի 9-ին, համանախագահները հանդիպում են ունենալու ԵԱՀԿ-ի
նախագահող Ֆինլանդիայի արտգործնախարար Ալեքսանդր Ստուբի հետ:

առաջին սեւամորզը, որ գլխաւոր
կուսակցութիւն մը դրօշակակիրը
կը հանդիսանայ յառաջիկայ
Նոյեմբերին կայանալիք նախագա-
հական ընտրութիւններուն:

Փոփոխութիւն իրագործելու
առաջադրանքով ճամբայ ելած
Թերակուտական Օպամայ, կարճ
ժամանակուայ մէջ կարողացաւ
ստեղծել հսկայ շարժում մը, իր
շուրջ համախմբելով յատկապէս

դիւնքում է: «Միւսների նկատ-
մամբ բացարձակ տեղաշարժ չկայ:
Մեր պահանջն է՝ անյապաղ ազատ
արձակել քաղաքատարկեալներին եւ
ոչ թէ խափանման միջոցը փոխել:
Մեր անդամների հացադուլը ես
քաղաքական չեմ համարում, այլ
մեր ընկերների համար պայքար է,
որ նրանք ազատութեան մէջ յայտն-
ուեն», - «Ա1+»-ի հետ զրոյցում
ասաց նա:

Նրա ասելով՝ առաջիկայում
միւս կուսակցութիւններից ես հա-
ցադուլաւորներ կը լինեն, եւ նրա
կարծիքով՝ նրանք նոյնպէս ՀՀԾ
վարչութեան մօտ կը հաւաքուեն:
«Զբացառենք, որ ՀՀԾ գրասենեա-
կը կարող է ընդհանուր դժգոհու-
թեան կենտրոն դառնալ: Քանի որ
նաեւ՝ այդ տարածքն աւելի ապա-
հով է հացադուլի համար: Լինելով
ՀՀԾ-ի տարածքը՝ ոտնձգութիւն-
ներ ոստիկանութեան կողմից չեն
կարող լինել», - նշեց տիկին Սարգս-
եանը:

Ինչ վերաբերում է հացադուլի
ժամկէտներին, ապա նա տեղեկաց-
րեց, որ իրենք իրաւունք չունեն
վստահելու իրենց ընկերների կեան-
քը եւ որքան կը կարողանան,
այնքան կը շարունակեն: «Սակայն
թէ ՀՀԾ-ից, ՄԴՀԿ-ից այնքան շատ
կամաւորներ կան, որ որոշել են
հացադուլի նստել, որ դա կարելի
է անժամկէտ համարել: Նրանք
ներքին որոշում ունեն, որ միմ-
եանց պէտք է փոխարինեն՝ երեք-
երեք օր նստեն», - աւելացրեց Լիւդ-
միլա Սարգսեանը:

մեծ թիւով երիտասարդներ, որոնք
հմայուած են ոչ միայն իր
գաղափարներով, այլ նաեւ
ճարտասանական իր բացառիկ
կարողութեամբ:

Հանրապետականներու ներ-
կայացուցիչը արդէն իսկ որոշուած
էր ամիսներ առաջ: 72-ամեայ ձոն
Մէքքէյն առանց մեծ դժուարութեան
դարձած էր այդ կուսակցութեան
թեկնածուն:

ՐԱՅԱՍՏԱՆ

ՀԱՅՐԵՆԱԿԵՐՑ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ, ՀԱՅՐԵՆԱՔԱՆԴ ԻՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

ՍԱՀԱԿԹՈՒԹՅԱՆ

Բարգաւաճ, ինքնիշխան եւ ապահով երկիր կառուցելու համար պայման է ունենալ սուրբերէ կամ ոչխարամիտ հլու հետեւորդներէ բաղկացած բնակչութիւն մը:

Անհրաժեշտ է, սակայն, ունենալ պարկեշտ եւ արթնամիտ քաղաքացիներու հաւաքականութիւն մը որ կարենայ հաւասարակշռել իշխանութիւններու գործունէութիւնը: Մէկ կողմէ՝ իշխանութիւններ որոնք երաշխաւորեն երկրի անդորրութիւնն ու խաղաղութեան ապահովումը: Միւս կողմէ՝ ազատ կամքի դրսեւորմամբ հանդէս եկող քաղաքացիներ որոնք լծուած ըլլան արդիւնաւէտ գործունէութեան: Հասարակութեան այս երկու բեւեռներու միատեղ բնականոն աշխատանքն է որ կ'ապահովէ երկրի բազմակողմանի զարգացման գործընթացը:

Հայրենի ներկայ իրականութեան պարագային հիմնովին խախտած է նման բաղձալի վիճակը: Հայաստանի Հանրապետութեան այսօրուայ իշխանութիւնները, դժբախտաբար, իրենց տրամադրութեան տակ գտնուող պետական բոլոր միջոցներն ու օժանդակ լծակները ի սպաս դրած են՝ քաղաքացիներու համար իրենց ծառայող կրաւորական, ստրկամիտ ու կամակատար տարրերը: Երկրի հարստութեան անկուշտ կողոպուտով զբաղած այս աւազակապետերու մտահոգութեան ծիրին բացարձակապէս դուրս կը մնան բնակիչներու անդորրութիւնը կամ անոնց կեանքի բարենպաստ պայմաններու ապահովումը: Պետական կենսական թիկունքէ գրկուած՝ քաղաքացիները անպաշտպան եւ անօգնական լքուած են: Անոնք չեն կրնար իրենց ճիգերը կեդրոնացնել՝ երկրի բազմակողմանի զարգացման իրենց գլխաւոր աշխատանքին վրայ: Ասոր հետեւանքն է մարդու իւր եւ մտային հարստութեան հսկայածաւալ ահաւոր վատնումը Հայաստանի ամբողջ տարածքին վրայ որուն լուռ ականատեսներն ենք անկախութեան առաջին օրէն ի վեր:

Երկրի մը հաւասարակշռուած, օրինաչափ զարգացման մասնակցելու եւ անոր հզօրութեան սատարելու համար անհրաժեշտ է նոյն կերպով մտածողներու կամ համա-

խոհներու գորշ, միապաղպղ հասարակութիւն մը:

Ընդհակառակը, անհրաժեշտ է իշխանութեան գլուխն ունենալ իրարու մօտիկ գաղափարներով մեծամասնութիւն մը - որու գործունէութիւնը հակակշռուած է այլախոհ աշխոյժ ընդդիմութեան մը կողմէ: Փոքրամասնութիւն հանդիսացող ընդդիմութեան առաջնային պարտականութիւնն է՝ քաղաքացիական պատասխանատուութեամբ ամբողջացնել իշխանութեան բացթողումները, խիստ քննադատութեամբ գայն կարգի բերելով երբ պահանջուի:

Յառաջացեալ ու յառաջադէմ բոլոր երկիրներու մէջ տիրող աւանդութիւնն է քաղաքացիներու հակառակ վերջին տասնամեակներուն այս աւանդութեան դէմ եղած կամ փորձուած կարգ մը աչքառու ոտնձգութիւններուն: Կարեւոր ըլլալով հանդերձ, սակայն, Սահմանադրութեան գրաւոր տրամադրութիւնները այս առնչութեամբ այդքան ալ վճռական դեր չունին, քանի զանոնք քաղաքական պրոտր պատճառաբանութիւններով կարելի է ամենայն հեշտութեամբ շրջանցել՝ եթէ առկայ է զանոնք կիրարկելու քաղաքական անշեղ կամքը: Եւ յաճախ բաւարար չափով այդ կամքը հազուադէպ առաքինութիւն մըն է մանաւանդ նորանկախ երկիրներու քաղաքագետներուն կամ անոնց ծաղրածուններուն մօտ: Ահա թէ ինչու այսօր Հայաստանի բանտերուն մէջ կը հիւժին հարիւրէ աւելի քաղաքական բանտարկեալներ որոնց միակ յանցանքը Ռոբերտ Քոչարեանի կամ Սերժ Սարգսեանի ականջներուն անհաճոյ քաղաքական կարծիքներ ունենալն է - երեւակայածին քրէական կամ այլ տիպի շինծու ամբաստանութիւններով, կամ նոյնիսկ առանց ամբաստանութեան - որ կալանաւորեն գանոնք՝ անմեղութեան պողտուքներ ձայնարկելով թէ Սահմանադրութեան մէջ քաղբանտարկեալներու վերաբերեալ տնօրինումներ չկան: Միւս կողմէ, իշխանութեան քղանցքներուն կպած տարրերը կը կազմեն «այո-մարդուկներու» (yes-men) խղճալի փոքրամասնութիւնը որ ուժային կառուցներու ապաւինած իշխանութիւններու կողմէ ծիծաղելի յամառութեամբ առաջ կը քաշուին որպէս իրենց խարխախ մեծամասնութիւն: Իսկ բուն, ճշմար-

իտ մեծամասնութիւնը իշխող բռնատիրական բիրտ ուժի օգնութեամբ հեռու պահուած է՝ իր սահմանադրական արդար իրաւունքներն իրականացնելու եւ ժողովրդավարական հայրենաշէն գաղափարները նիւթականացնելու օրինական միջոցներէն:

Իր ժողովուրդին խաղաղ եւ ապահով կեանքի պայմաններ հայթայթող կայուն պետութիւն մը կառուցելու համար պայման է ունենալ աշխարհի կամ տուեալ տարածաշրջանի ամենազարգացած տնտեսութիւնն ու հզօրագոյն բանակը:

Բայց անհրաժեշտ պայման է ունենալ հաւասարակշռուած աշխոյժ տնտեսութիւն մը, ինչպէս նաեւ քաղաքացիական գիտակցութեամբ թրծուած զինուորներով եւ ռազմական արդիական միջոցներու տիրապետող ազդու բանակ մը որ ի վիճակի է տարհամոզելու որեւէ նախադրածակ՝ թէ ինքնապանական անընդունելի համեմատութիւններու պիտի համաձայն չեն խուժողներուն նիւթական ու մարդկային կորուստները:

Որպէս փոքր ժողովուրդ որ իր տրամադրութեան տակ ունի բնական սահմանափակ միջոցներ միայն, հասկնալի է թէ մեր տնտեսութիւնն ու պաշտպանութեան միջոցները միշտ ալ պիտի մնան որոշ սահմաններու մէջ: Այս իսկ պատճառով պէտք է որ ունենան առաւելագոյն ընտրովի բնոյթ: Այսպէս, մեր հնարամտութեան զարկ տալով, կարելի է նախապատուութիւն տալ առողջ տնտեսութեան մը որ հիմնուած ըլլալ քաղաքացիական լուսամիտ հասարակութեան իւրաքանչեւ նորայայտ հնարաւորութիւններուն վրայ: Ներկայ իշխանութեան քաղաքացիական անողնաշար համակարգով, հարստապետներու սպասարկու «մկների ազգային ժողովով», ըստ նախագահական պատուէրի շարժող կառավարութեան տիկնիկային անհեթեթ թատրոնով, ներքինիներու վստահուած զանգուածային լրատուական միջոցներով, եւ առհասարակ ստրկացուած հպատակներով կարելի է իրագործել նման վիթխարի առաջադրանք: Ասիկա կարելի է յաջողութեամբ գլուխ հանել միայն ազատ եւ անկախ մտածումի տէր յառաջապահ քաղաքացիներու գերմարդ-

կային երկարատեւ ճիգերով: Անոնք կարելիութիւնը պիտի ունենան խանդավառութեամբ ընթացք տալու իրենց մտային, արհեստավարժ եւ ստեղծագործ լաւագոյն մղումներուն ու կարողութիւններուն՝ երբ ամբողջութեամբ վերնան քոչարեանական-սերժական ներկայ ամլացուցիչ սեղմումներն ու ճնշիչ մթնոլորտը: Նոյն տրամաբանութեան կը հետեւի ջղուտ, ճկուն, բարձրորակ, առաւելագոյնս ազդու եւ վստահելի բանակի մը կազմաւորումը որ կարենայ դիմակայել տարածաշրջանին գալիք որեւէ անախորժ անակնկալ - եւ որ անհրաժեշտ պահուն համալրուի լաւապէս մարզուած երկսեռ քաղաքացիներու զօրահաւաքով:

Ամբողջ աշխարհի եւ հարեւան երկիրներու հետ արժանապատիւ յարաբերութիւններ մշակելու համար, ամէն բանէ առաջ անհրաժեշտ է ժողովրդավարական յարաբերութիւններ ունենալ երկրէն ներս՝ իշխանութեան եւ ընդդիմութեան միջեւ փոխադարձ յարգանքի հիման վրայ: Անհրաժեշտ է, ապա, շրջապէս խոր ուսումնասիրութեամբ կեանքի կոչել արտաքին ճկուն բաց հաստատ քաղաքականութիւն մը որ համահունչ ըլլալ երկրի ներքին կարիքներուն, կարողութեան, զօրաւոր կողմերուն եւ յարաբերաբար խոցելի հանգամանքներուն հետ:

Ձախողութեան դատապարտուած է ներքին հասարակական քաղաքականութիւն մը որ հիմնուած է բնակչութեան մէկ փոքր հատուածին կողմէ մնացեալ ամբողջ բնակչութեան անխնայ շահագործման վրայ: Եւ ուր քաղաքական ընդդիմութեան արտօնուած է լիարժէք կիրառել իր սահմանադրական իրաւունքները: Նոյնպէս անփառունակ ձախողութեան դատապարտուած է այն արտաքին տարերային «քաղաքականութիւնը» որ հաշուի չ'առնել երկրի ներքին համընդհանուր կարողութեան իրապաշտ գնահատականը - ուր երկրի կարողութիւնը ուռեցուած ու ձեւագեղծուած է ծուռ հայելիի մէջ:

Նորանկախ Հայաստանի մէջ ճշմարիտ ժողովրդավարութեան հաստատման համար բացարձակ նախապայման է ներկայիս տիրող

Շաբ.բ էջ 19

1975-2008 33th ANNIVERSARY Life, Health, Group Health Disability, Long Term Care NEW YORK LIFE

ԱՊԱՌՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԱՆՌԱԺԵՇՏ Է ԵՐԻԵՔ ՈՒՅ ԶԷ ՎԵՐԱՔՆՆԵԼՈՒ ԶԵՐ ԱՊԱՌՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՊԵՏՐՈՍ ԵՒ ՍԻԱՍԱՆԹՕ ՄԱՐՈՆԵԱՆ 818 500-9585 ABA INSURANCE SERVICES 805 E. Broadway . Glendale, CA 91205 E-mail: BMaronian@AOL.com ONE EIGHT HUNDRED FOUR "HAI-TAD"



ԱԶԳԱՅԻՆ

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՐԺԱՆԱԻՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐՈՒ ԿԱՐԻՔԸ

Այս յօդուածը ներկայացուած է Լեւոն Տէր-Պետրոսեանի Աջակցութեան Համաժողովրդական Շարժման ԱՄՆ-ի Յամաճախումքի կազմակերպած համաժողովին, Կլէմտլի Յիլթըն պանաթոնիկ մէջ, Մայիս 26, 2008-ին:

ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԻԹԵԱՆ

Աշխարհի վրայ կա՞յ արդեօք ժողովուրդ մը, որ իր պատմութեան ընթացքին հայ ժողովուրդին չափ անկախ պետականութիւններ կերտած ու կորսնցուցած է: Այդքան անգամ դարձած է գերիշխան ու ճորտ: Հայ ժողովուրդը ազատութեան ու անկախութեան գաղափարներուն վրայ կերտած է իր ազգութեան երկունքը ու միշտ ձգտած անոնց իրագործման: Բայց երբ տիրացած է անոնց, շատ ժամանակ չանցած ձեռքէ տուած է: Քանի՜ քանի անգամներ կրկնուած է այս ծիրը (cycle)՝ ազատութեան եւ անկախութեան ձգտում, մարտնչում, ձգտման իրագործում, իրագործուածի վատնում, ճորտացում, կարօտախտ դէպի կորսուածը ու վերաձգում: Դժբախտութիւնը հոն է, որ ամէն մէկ ծիրի թաւալումին հետ, կորսնցուցած ենք հող, թուաքանակ, ազգային ու մշակութային արժէքներ, եւ այլն: «Ուր էլ որ հասել, որտեղ էլ եղել, անջինջ հետքեր ենք ամէնուր թողել: Զանացել ենք միշտ ամէնքի համար... ու գիտէք շարունակութիւնը Պարոյր Սեւակի այս բանաստեղծութեան: Բայց ինչո՞ւ չենք ջանացել մեզ համար, մեր հողի, մեր հայրենիքի համար: Աւելի քան հարիւրամեակ մը առաջ, արեւելահայ մտաւորական մը, Պոլսոյ Իզմիրլեան Պատրիարքին ուղղուած գաղտնի տեղեկագրի մը մէջ մատը կը դնէր վէրքին վրայ, նշելով.

«Այսպէս է եղել առասպելական Հայկի ժամանակներից մինչեւ մեր օրերը եւ այսպէս կը գնայ մինչեւ որ եսականութիւնը եւ անձնական հաշիւը գերակշռում է մարդուն մէջ ամէն մի ուրիշ գոհացմունքի:

«Ահա մեր թշուառութեան, տկարութեան եւ ողորմելի դրութեան բուն պատճառը առասպելական ժամանակներից մինչեւ հիմա եւ հետեւապէս, հաւանական է եւ ապագայում: _ Ասորիք, Պարսիկք, Յոն, Հռոմայեցիք, Մոնղոլ, Տաճիկ, անցեալում, Ռուս կամ մէկ ուրիշը ապագայում _ սրանք միմիայն առանձին դերակատարներ են եղել, են՝ կամ պիտի լինին մեր ազգային ողբերգութեան»:

Զօրաւոր անհատականութեան յատկանիշը հայ մարդու նկարագրին կարեւորագոյն գիծերէն մին է: Անոր շնորհիւ է, որ հայը, ո՞ր երկրի մէջ ալ գտնուած է, յաջող դիրքերու հասած է: Բայց դժբախտաբար այս գիծը նաեւ հայը դարձուցած է աւելի եսակեդրոն, քան՝ հաւաքական պատկանելիութեան ջատագով. աւելի անձնասէր, քան՝ ազգասէր: Ու նաեւ՝ աւելի անհամբեր: Հայ անհատը երբ իր համար նպատակակէտ մը դնէ, շատ յաճախ կը յաջողի իր կեանքի ընթացքին իրականացնել այդ մէ-

Այսինքն՝ Այր մի, որ ապացուցեց,

Թէ հրաշք չկա՞յ, Այլ կայ լոկ կարի՞ք»:

Ի՞նչ են ճգնաժամային վիճակի մէջ յայտնուած Հայաստանի գլխաւոր կարիքներն այսօր: Մեր համեստ կարծիքով՝ ժողովրդավարութիւն եւ արժանաւոր առաջնորդներ:

Մեզ նման փոքր ժողովուրդներու պարագային մանաւանդ, ժողովրդավար հասարակարգ ունենալը լաւագոյն երաշխիքն է մեր անկախութեան եւ գերիշխանութեան: Իր պատմութեան գիտակ ամէն մէկ հայու մտածելակերպին մէջ ամրագրուած իրականութիւն պէտք է ըլլայ այս



կը: Բայց նկատելով որ ազգային նպատակակէտեր իրագործելը դժուար է կատարել անհատի մը կեանքի տարիներուն տեւողութեան ընթացքին, այլ կը պահանջէ սերունդներու աշխատանք, ուրեմն հայը կը նախընտրէ փոքր խնդիրներ դնել ու լուծել, քան՝ ազգային տեսլականներ: Այս մտածելակերպին պատճառաւ է նաեւ, որ յաճախ մեծ պատկերը վրիպած է մեզմէ, որովհետեւ զբաղ եղած ենք ամէնօրեայ մանրութեանով: Ու սթափած ենք միայն այն ժամանակ, երբ դանակը հասած է ոսկորին, ու ծնունդ տուած Մեծերու: Դարձեալ Պարոյր Սեւակի բառերով.

«Մաշտո՞ց... Այսինքն՝ Այր մի, որ եկաւ ապացուցելու, Թէ մի տեղ վերջը դառնում է սկիզբ:

մէկը: Ժողովրդային իմաստութիւնը, արտայայտուած Սասնա Շուքի դիւցազնավէպով, ա՛յդ կը թելադրէ մեզի: Նկարագրելով Առիւծ Մհերի բազում պատերազմներու մէջ յաղթական դուրս գալը, հոն կ'ըսուի.

«Բայց ուժը նրա, որ չէր կասում, ԺՈՂՈՎՈՒՐԴՆ էր բազմաբազում: Եւ անպարտ էր նա իր սրով սուր, եւ ԺՈՂՈՎՐԴՈՎ ուսմիկ ու սուրբ»:

Այլ տեղ մը՝ «Առիւծ Մհերին, դիւցազնին մեր, ԺՈՂՈՎՈՒՐԴՆ էր իրեն իշխան կարգել, եւ ապրում էր իր լեռներում դեռ, նա կեանքով ազատ ու անարգել»:

Երբ պատեհապաշտ, մեծամիտ ու անզրագէտ մարդիկ, խախտելով ժողովրդային այս պարզ իմաստութիւնը, կը փորձեն անօրինականութիւններով ու կեղ-

ծիքներով իրենց կամքը պարտադրել ժողովուրդին, անոնք վտանգած կ'ըլլան մեր պետականութիւնն ու գերիշխանութիւնը, որովհետեւ փոխան սեփական ժողովուրդի թիկունքին, ստիպուած են ապաւինելու օտար ուժերու: Հետեւաբար, ժողովուրդը իրաւասու կ'ըլլայ մերժելու այդպիսիները եւ զանոնք փոխարինելու իր վստահութեան արժանիներով:

Մեր պատմութիւնը նաեւ կը վկայէ մեզի, որ երբ ունեցած ենք արժանապատիւ առաջնորդներ, վայելած ենք արժանաւոր կեանք: Հայ ժողովուրդը առաջինն էր, որ աւելի քան 1500 տարիներ առաջ, Նուարասկի դաշնագրով, օտարին պարտադրեց, որ միայն արժանաւորներ պէտք է հասցնել ղեկավար դիրքերու եւ ոչ թէ անարժաններ ու քծնողներ: Հետեւաբար, մեր պարտքն է անսալ մեր պատմութեան կանչին ու պայքարիլ յանուն ժողովրդավար Հայաստանի ու արժանաւոր առաջնորդներու:

Համաժողովրդական շարժումը պէտք է հետեւողականօրէն հետապնդէ այդ նպատակները, ժողովուրդին պարզելով՝ մեծ պատկերը տեսնելու եւ զայն հետապնդելու անհրաժեշտութիւնը:

Համաժողովրդական շարժումը պէտք է ժողովուրդին մէջ ամրապնդէ հաւաքական պատկանելիութեան եւ միասնական ճակատագրի գիտակցութիւնը, փոխան՝ գիրար խաչաձեւող անձնական հաշիւներու արշաւի:

Համաժողովրդական շարժումը պէտք է գաղափարական հիմք հայթայթէ շարժմանը, ջատագովելով ժողովրդավարութիւնը, փոխան՝ անձնականացման ու անհատական փառատենչութեանց:

Համաժողովրդական շարժումը պէտք է ժողովուրդը մղէ ազգասէր դիրքորոշման, փոխան՝ անձնասիրութեան:

Համաժողովրդական շարժումը պէտք է պայքարի արժանաւոր մարդիկ հասցնելու առաջնորդող դիրքերու:

Համաժողովրդական շարժումը պէտք է ճիշդ ուղի վերադարձնէ իր հունէն շեղած 1988-ի շարժումը:

Համաժողովրդական շարժումը պէտք է ձգտի Չարենցեան պատգամի գործնականացման, ի փառս՝ մեր անկախ պետականութեան գերիշխանութեան ամրակայման ու յարատեւման:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԲՐՈՆԻԿ ԶԵՄԻՐԷ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԱՂԲԱՆ

Նախընտրեցի «Մշակութային» կոչել քան թէ «Թատերական» Մայիս 30, 31 եւ Յունիս 1 2008 թուականի «Զէմիրէ» ներկայացումը, որ հետաքրքրական խորագրով մը մշակութամէք հասարակութեան մը հրամցուեցաւ, այսինքն «Արեւելեան Զրոյց - կախարդապատկեր»։ Ինչ կը վերաբերի «կախարդապատկերի», Տիգրան Զուխանեան ինք եւս իր գեղեցիկ գործը, ֆրանսերէն լեզուով «Ֆէէրի» նկարագրած էր, այսինքն կախարդական, պարիկային, կամ պատրանքային աշխարհի վերաբերող երկ մը։

Ուրեմն 3 օրերու վրայ ներկայացումները ուղղակի կախարդական աշխարհէ մը ներս փոխադրեցին շուրջ 9000 հանդիսականներ, որոնք խուռնեցած լեցուցած էին Փասատինայի շքեղ հանդիսասրահը, «Civic Auditorium»ը։

Յայտագիրը խելացիօրէն ծրագրուած էր հարուստ տեղեկութիւններով։ Անոր բովանդակութեան կարելի չէր լման տեղեակ մնալ նոյնինքն երեկոյի ընթացքին, եւ ուրեմն այս քրոնիկը պատրաստելէ առաջ, ուղղակի մխրճուեցայ սոյն յայտագրի ընթացքման մէջ, եւ ներկայացումէն ստացած իմ գերազանց տպաւորութիւններու, հաճոյքով կը կցեմ բովանդակ գնահատական խօսքերս։

Զէմիրէի ներկայացումը, այնպէս որ մենք վայելեցինք, գրեթէ ոչինչով կը գիշի եւրոպական կամ ամերիկեան արհեստավարժ կազմակերպութեանց արտադրութեանց, որոնք անշուշտ օժտուած են թեքնիկ եւ մանաւանդ ֆինանսական հանգիստ պայմաններով։

Նաեւ ըսենք թէ ինչու «մշակութային» քան թէ «Թատերական» կոչեցինք այս ձեռնարկը, պարզապէս իր «ամբողջական» նկարագրին համար, որ իր մէջ կը պարունակէ արուեստի եթէ ողջ լման, գէթ գրեթէ բոլոր ճիւղերը։ Թատրոնը ինքը եւս բազմաբովանդակ արուեստ է, սակայն օֆերային արուեստը քիչ մը աւելի ճոխ է քան սոսկ թատրոնը, իսկ «Զէմիրէ»ն իր մէջ կը պարունակէր մշակոյթի բազմաթիւ մասեր, իրարու հետ ներդաշնակօրէն ազուցուած - երաժշտութիւն, երգ, թատրոն, պար, տեքոր, դերասանութիւն, լուսաւորում, տարագ (costume), եւ «makeup», շպարային արուեստ։ Տակաւին չխօսեցանք նուազախումբի ղեկավարի եւ բեմադրական արուեստի մասին որոնց կ'անդրադառնանք քիչ յետոյ։

Ուրեմն հանգիստ սրտով, եւ որոշ հպարտութեամբ կրնանք հաստատել որ «Զէմիրէ»ն ինչպէս նոյն հեղինակի «Լեպլեպիճի»ն եւ «Զուարթ»ը հայկական իմաստով, արտադրութիւններ եղան, որոնք օժտուած էին եւրոպական եւ ամերիկեան իմաստով, այս վերջիններու լաւագոյն արժանիքներով։

Ֆրանսացիները գեղեցիկ արտայայտութիւն մը ունին երբ դէմ յանդիման կու գան գնահատելի իրադրութեան մը։ Կ'ըսեն «chapeau», այսինքն «գլխարկ», իբրեւ գնահատանքի եւ շնորհակալութեան, նաեւ յարգանքի արտայայտութիւն։ Մենք ալ, «Զէմիրէ»ի յղթանակէն թելադրուած, ամենայն անկեղծութեամբ, պիտի ուզէինք «chapeau-glaxar» ըսել հետեւեալ անձերու

եւ կազմակերպութեանց, որոնց համարեալ եւ ներդաշնակ ճիւղերուն կը պարտինք «Զէմիրէ»ի յաջողութիւնը։

ՈՐՈՇԻՔ ԵՆ
«ԳԼԽԱՐԿ»Ի ԱՐԺԱՆԻՆԵՐԸ
 - Հ.Բ.Լ.Մ. «Արտաւազը» թատերախումբ, եւ անոր վարչակա-



կան եւ գեղարուեստական պատասխատաններ՝ Սամուէլ Իլանճեան եւ Գրիգոր Սաթամեան։

- «Լարք» երաժշտական ընկերակցութիւն, եւ անոր վարչական եւ գեղարուեստական ղեկավար Սթիվ Ագատեան եւ Վաչէ Պարսումեան։

«Մենք տակաւին պիտի շարունակենք մեր երթը, ներկայացնելու իր (այսինքն Տիգրան Զուխանեանի) չորրորդ գործը եւս, եւ վերջապէս հրատարակելու անոր չորս ստեղծագործութիւնները»։ Կ'ենթադրեմ որ Իլանճեան ի մտի ունի Տիգրան Զուխանեանի 1868ի հեղինակած Արշակ Բ. օֆերան։

Հեղինակը անշուշտ Տիգրան Զուխանեանն է, հանճարեղ եւ անմահ հայ երգահանը, որուն կեանքը յատկանշուած է, ոչ միայն առողջապահական, այլ ստեղծագործական լուրջ եւ տեսակաւոր վերիվայրուներով։ Երկար տանամեակներ, Տիգրան Զուխանեանի մասին գիտէինք իր օֆերաներով «Արշակ Բ.», «Զուարթ», եւ «Լէպլէ-

պիճի»։ Ինք եղած է իտալիա, Միլանօ քաղաք, ուր ստացած իր երաժշտական բարձրագոյն կրթութիւնը եւ յատկապէս ծանօթացած իտալական «Պէլ Քանթօ» (գեղեցիկ մեղեդի) ոճին, ոճ գոր կը նշմարենք իր օֆերաթիք յօրինումներուն մէջ։ Անտարակոյս Զուխանեան կը նկատուի հայկական, եւ թրքական օֆերայի հիմնադիրը։ Գնահատելին այն է, որ յատկապէս այս օրերուն, Տիգրան Զու-

խանեանի վաստակը իր արժանի գնահատանքի կը հասցուի իր ծննդավայրէն եւ Հայաստանէն հեռու, Լոս Անճելոսեան պայմաններու տակ, աշխատանք եւ նուաճում մը որուն համար մեծապէս շնորհաւտելի են երկու միաւորներ՝ Հ.Բ.Լ.Մ.ի «Արտաւազը» թատերախումբը եւ «Լարք» երաժշտական ընկերակցութիւնը, եւ այս երկու միաւորներու դերասան-բեմադրիչ Գրիգոր Սաթամեանը, եւ իմբեպար, երաժիշտ եւ թարգմանիչ Վաչէ Պարսումեանը։ Կարելի է երկար գրել Տիգրան Զուխանեանի մասին։ Հետաքրքրուողները կրնան ստանալ «Զէմիրէ»ի յայտագիրը եւ ծանօթանալ իր մասին։

«ԶԵՄԻՐԷ»Ի ՄԱՍԻՆ
ԻՆՉ Է ԱՅՍ ԳՈՐԾԸ

Ըսուեցաւ արդէն որ յայտագիրը «Զէմիրէ»ն կը նկարագրէ իբրեւ «Արեւելեան Զրոյց - կախարդապատկեր»։ Անոր օֆերա ըլլալը պէտք է ենթադրել այս բացատրութեամբ։ Յայտագրի տար-

բեր տեղեկութեանց մէջ կը հանդիպինք տարբեր բնորոշումներ - դիւթախաղ, ֆրանսերէնով՝ «Ֆէէրի», օֆերա-քոմիք, այսինքն «կատակերգակ-օֆերա», «օֆերա-սեմիսերիա», «գուսաներգութիւն», «ֆանթէզի օրիէնթալ», եւ այլն։ «Զէմիրէ»ի «լիպրետթօ»ն, այսինքն թատերախաղը կը պատկանի ուրիշ Տիգրանի մը, գրուած թրքերէն լեզուով, Գալէմճեան անունով, հիմնուած արաբական աւանդավէպի մը վրայ, որուն աղբիւրը կը մնայ անյայտ։ Գալէմճեան թատերախաղին կու տայ էպիլոտիա եւ Զէմիրէ անունը, որ յետոյ կը վերածուի «Զէմիրէ»ի, բնութագրուելով, ֆրանսերէնով «օֆերա քոմիք եւ դիւթական»-։ Հոս պէտք է յայտնել նաեւ որ «Զէմիրէ»ի առաջին բեմականացումը տեղի կ'ունենայ ֆրանսերէն լեզուով, Պոլսոյ մէջ, 1891 թուականին, Մարտ 31 Ապրիլ 12ին, Բերայի ֆրանսական նոր թատրոնին մէջ։ Իր յօրինումէն 120 տարիներ ետք, հայերէն լեզուով առաջին անգամ «Զէմիրէ»ն կ'ուսնենայ իր համաշխարհային «փրօմիերա»ն Լոս Անճելոսի մէջ, գործակցութեամբ Հ.Բ.Լ. Միլանեան «Արտաւազը» թատերախումբի եւ «Լարք» երաժշտական ընկերակցութեան։ Սամուէլ Իլանճեանի «Մեր Խօսք»է կ'իմանանք որ Վաչէ Պարսումեանի հայերէն թարգմանութիւնը, «խիստ բժախնդրութեամբ, յամու եւ երկարատեւ աշխատանքով, հայերէնի թարգմանուած է Վաչէ Պարսումեանի կողմէ, չորս տարբեր լեզուներու բնագիրներէն քաղելով եւ կորուստէ փրկելով Զուխանեանի այս գործը»։

Ներկայացման ընթացքին ուրեմն հայերէնը թարգմանութիւնն է մախսթօ Վարչէ Պարսումեանին։ Կ'երեւի այդ չորս լեզուներն են թրքերէնը, իտալերէնը, ֆրանսերէնը եւ ուսուցիչները։ Վստահ ենք որ պատասառի վրայ ցուցադրուող անգլերէն «թեքստ»ը խիստ օգտակար նիւթին հետեւելու համար, գոր պատրաստած էր Սիլվա Մանուկեան, օգնական ունենալով Արմէն Արոյեանը։

Շար.ը էջ 16

GREEK NIGHT

ՅՈՒՆԱԿԱՆ ԵՐԵԿՈՅ

Կազմակերպութեամբ՝ Հ.Մ.Մ.-ի Ընկերային Յանձնախումբի

Երեկոյն կը խանդավառէ Սիրուած Երգիչ՝

Գօգօ Հայիթեան

եւ իր Գուսափախումբը



Շաբաթ, 7 Յունիս 2008

Երեկոյեան 8:00-էն սկսեալ

Հ.Մ.Մ.-ի «Կարօ Սողանալեան» սրահին մէջ

1060 N. Allen Ave., Pasadena

ՏՈՄՍԵՐՈՒ ՀԱՄԱՐ ԳՒՄԵԼ՝

Մանուկ (213) 624-6451 կամ Ալից (626) 794-6966

Մուտքի նուէր՝ \$40.00

ԳԱՂՈՒԹԱՅԻՆ

ՔԱՅԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՕԾՈՒՄ ԲՐՇ. ՄԱՅԻՍ ԵՒ ՎԱՅԷ ՍԱՐԿԱԲԱԳՆԵՐՈՒ ՍՈՒՐԲ ՅՈՎՀԱՆՆՈՒ ԿԱՐԱՊԵՏ ՅԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԵԶ



Քահանայական Ձեռնադրութեան եւ Օծման Կարգը

Մայիս 28 եւ 29, 2008 չիշատակելի օրեր եղան Հայց. Եկեղեցւոյ Արեւմտեան Թեմի եւ յատկապէս Հալիվուտի Սուրբ Յովհաննու Կարապետ Հայց. Եկեղեցւոյ եւ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ-Պրբալէնքի Ծուխին համար: Երբ Սուրբ Յովհաննու Կարապետ Հայց. Եկեղեցւոյ մէջ Թեմիս Բարեխնամ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արքեպիսկոպոս Տէրտէրեան, մասնակցութեամբ Թեմիս Հոգեւորականներու, ըստ ծիսի եւ կանոնաց Հայց. Եկեղեցւոյ, քահանայ ձեռնադրեց եւ օծեց Հալիվուտի Սուրբ Յովհաննու Կարապետ Հայց. Եկեղեցւոյ Հովիւի Օգնական՝ Բրշ. Վահէ Սրկ. Աբովեանը եւ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ՝ Պրբալէնքի Ծուխի Հոգեւոր Հովիւ՝ Բրշ. Մայիս Սրկ. Շահպագեանը:

Քահանայական Ձեռնադրութեան եւ Օծման Կարգը տեղի ունեցաւ Հինգշաբթի, Մայիս 29ին, 2008:

Երեկոցեան ժամը 7:00ին օրուան Սուրբ Պատարագը մատուցեց Թեմիս Բարեխնամ Առաջնորդը՝ Գերշ. Տ. Յովնան Արքեպիսկոպոս Տէրտէրեան: Սուրբ Սեղանին սպասարկեցին Հոգշ. Տ. Տաճատ Ծ. Վրդ. Եարտըմեան, Արժ. Տ. Մանուկ

nian Heritage-ի ծովագնացութեան: Այս առթիւ ամենագոր համացանցին շնորհիւ «վերագտնուած» դասընկերուհիս՝ Նուարդը կը գրէր. «ընկերուհիներ չէինք մենք, քոյրեր էինք, միասին կերանք, խմեցինք, պառկեցանք, բացառիկ ընկերութիւն»: Ես պիտի աւելցնեմ կիսեցիկ իրարու ցաւն ու ուրախութիւնը, քէնցանք երբեմն, հաշտուելու համար շուտով, ըրինք մեր մեծ ու պզտիկ չարութիւնները ու ստացանք անոնց համապատասխան կա անարդար պատիժներ, թեւ թեւի մտած ձեռքեցինք առաջին մելգոնեանցիներու ձեռքերով տնկուած պուրակներուն ու բակին մէջ, միխթարեցինք զիրար երբ գողտրիկ առաջին սէրերը վերածուեցան առաջին յուսախաբութիւններու:

Կը մտածեմ ես երբեմն աղջիկներուն ու տղոց՝ Որոնք ճիշդ նոյն յարկին տակ օր մ'ապրեցան ձեզի պէս:

Անքցերուն մէջ, դաշտերուն ու բակին մէջ միեւնոյն, Վազգեցին, մերթ ինկան, յետոյ ելան ձեզի պէս:

.....
Հասակն իրենց դեռատի եւ աչուրներն իրենց բոց,

Բացին լոյսի, գիտութեան այս տաճարին միեւնոյն:

.....
Յոգնած, ուրախ կամ տխուր հաւաքուեցան նոյն զանգին,

Եւ յանձնեցինք կեանքն իրենց «Յրեշտակի մը գուարթուն» (Վ.Ս.)

Մտքով կը փոխադրուիմ Մելգոնեան ու կը շրջիմ առաջին յարկի գիտական աշխատանոցները, ակումբներն ու ճաշարանները, երկրորդ յարկի դասարանները, երրորդ յարկի հանդիսասրահն ու ննջարանները, մարզադաշտերը, հիւանդանոցին ճամբան, 1989-ին բացուած նոր համալիրը եւ փակ

Շար.ը էջ 17

բժիշկ եւ հիւանդապահուհի, ուսուցիչ եւ ազգային գործիչ, լրագրող, ճարտարագէտ ու արհեստագէտ, արուեստագէտ, գործարար ու պաշտօնեայ ու մեր ընտանիքին միացած «հարս»երով ու «փեսայ»ներով դարձան ծնողք ու ոմանք, մեծ ծնողք:

Անցնող Յունուարին, մեր շրջանաւարտութեան 40-ամեակը նշելու նպատակով, մեր դասարանի կէսէն աւելին մասնակցեցաւ Arme-

ԱԼԷՒ ԹՈՒՐ
www.Aleptour.com
Աննախընթաց Ծրջապտոյտ
ՍԱՆ ՖՐԱՆՍԻՍԿՕ
ԵՒ ԱՅԼ ՎԱՅՐԵՐ
1. Լոս Անճելըս-Սանթա Պարպարա-Սոլվէնկ-Սանթա Մարիա
2. Սանթա Մարիա-Գարմէլ - 17 Մայլ Ուաֆ - Մանըրէյ - Սան Ֆրանսիսկո
3. Սան Ֆրանսիսկո
4. Սան Ֆրանսիսկո - Եուսէմըթի - Ֆրէզնո
5. Ֆրէզնո - Լոս Անճելըս
Միայն \$325 - 5 օր Յունիս 23-27, 2008
Ներառեալ երթեւեկ, պանդոկ, նախաճաշ, պտոյտներ...
Հասոյթը պիտի յատկացուի Փաստիմայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ ֆոնտին
Սահմանափակ տեղեր
Մանրամասնութեան համար զանգահարել
(626) 797-9469

ԳՐԱԿԱՆ

ՆՈՐ ԱՆՈՒՆ

ԳՐԻԳՈՐ ՏԱՅԵԱՆ

ՆՈՒԱՐԴ ԳՐԻԳՈՐԵԱՆ

2007 թ. Սեպտեմբեր ամսին Պուլկարիայի Պլովդիվ քաղաքում հրատարակուեց նորընտիր հեղինակ Գրիգոր Տայեանի «Մի Հերոսի Հեքիաթային ճակատագրի պատմութիւն» վէպը, որ հեղինակի վերջին հինգ տարիների ընթացքում գրած ստեղծագործութիւններից վեցերորդն էր:

Գրիգոր Տայեան ծնունդ է Պուլկարիայի Պլովդիվ քաղաքում, 1932 թվականին: 1946ին ծնողների հետ ներգաղթել է Հայաստան բնակութիւն հաստատելով Երեւանում, որտեղ էլ ստանում է միջնակարգ կրթութիւնը: 1955 թ. ընդունում է Մոսկովայի կապի ինստիտուտը, որն աւարտելուց յետոյ 1960 թ. նշանակում է Հայաստանի կապի մինիստրութեան գլխաւոր ինժինէր: 1973 թ. իր ընտանիքով մեկնում է Արժենթինա եւ դառնում Պուլկարիայի կապի հիմնարկներից մէկի՝ Սիեմենայի աշխատակից, մինչեւ թոշակաւ դառնալը (2003 թ.), 2004 թ. Պուլկարիայի լոյս է տեսնում «Կեանքի Ուղիներում» ինքնակենսագրական վէպը, 2005 թ. «Ճանապարհորդութիւն Դէպի Գալիֆոռնիա», 2006ին՝ «Ճանապարհորդութիւն դէպի անցեալը» ուղեգրութիւնները: 2005 թ. Տայեանը հրատարակում է «Վաղարշը» հոգեբանա-դրամատիկ վէպը, 2006 թ. «Հայրենիքի համար» վէպը որը ներկայացնում է 20րդ դարի սկզբին Արեւմտեան Հայաստանի հայ մի ընտանիքի պատմութիւնը, առաջին համաշխարհային պատերազմում կոտորուող հայ մարտիկների հայրենիքի հանդէպ ունեցած նուիրուածութիւնը եւ հերոսական արարքները:

2007 թ. լոյս տեսած «Մի Հերոսի Հեքիաթային ճակատագրի Պատմութիւնը» գիրքը Հունգարիայի հայկական գաղթօճախում ծնունդ է տեսնում Եւրոպական այլ երկրներում ապրած եւ իր անունը փառքով պատկած, 27 տարեկանում գեներալի կոչում ստացած Յովհաննէս Յեցեանի մասին է: Նրա գերդաստանի պատմութեան կենսագրական ֆոնի վրայ ներկայացուած են անցեալի պատմական եղելութիւնները, 1800-ական թուականների սկզբի՝ Անի մայրաքաղաքի քաջարի բնակիչների կենցաղը, պաշարը գոյատեւելու համար, արտագաղթը տարբեր ուղիներով ընդունելով՝ Լեհաստան, Մոլդովիա, Հունգարիա այնտեղ հիմնած գաղթօճախներում նրանց կրօնքը, զբաղմունքը:

Այս գիրքը ստեղծագործական նոր որակ է առաջին հերթին բեմաթիկայի տեսակէտից:

Հեղինակը գլխաւոր հերոսի կեանքի պատմութիւնը ներկայացնելու նպատակով լուրջ, հանգամանալից գիտական հետազոտութիւն է կատարել, ընդլայնել դէպքերի, գործողութիւնների ընդգրկման շրջանակը, խորացել պատմական իրադարձութիւնների մէջ հերոսի ծնողների, ապուպայերի ժամանակաշրջանի մասին պատմելիս՝ նպատակ ունենալով ընդգծել գերդաստանի արմատների դերը նրա մարդ կերպարի ձեւաւորման մէջ:

Գրքի առաջին մասի Արեւմտեան Հայաստանի տուեալ ժամանակաշրջանի հայերի սոցիալ-քաղա-

քական կեանքի մանրամասնութիւնների ներկայացնելը հեղինակի կողմից խիստ դիտումնաւոր է: Նպատակ է ունեցել շեշտել այն օբյեկտիւ պատճառները, որոնք ստիպել են տեղաբնակ հայերին թողնել իրենց տուն ու տեղը, հայրենիքը, ծննդավայրը, ուրիշ երկրներում ստեղծել գաղթօճախներ եւ նպատակ դրանց բարգաւաճմանը: Հետեւողականօրէն խորանալով իր միտումի մէջ՝ հեղինակը նպատակաւ կերպով ներկայացնելով արժանաւոր հայորդի Յովհաննէս Յեցեանի առասպելական կեանքի պատմութիւնը՝ ընթերցողին յանգեցնում է անհրաժեշտ եզրակացութեան. չլինէին այդ տեղահանութիւնները, ոչ միայն կորուստներ, բաժանումներ էջին լինի, այլեւ բոլոր շնորհալի, տաղանդաւոր հայորդիները իրենց կարողութիւնները կը ծառայեցնէին մեր երկրի ծաղկմանն ու բարգաւաճմանը: Այստեղ ակամայ ցաւեցնող միտք է ծագում իւրաքանչիւր ընթերցող գլխում, աշխարհասփիւռ հայութեան շարքերում որքան ցեցեաններ կան, որոնք արժանաւոր են, տաղանդաւոր, իրենց ազգին պատիւ բերող, սակայն նրանց անուններն անյայտ են մնացել, քանի որ նրանց գործունէութիւնը չի լուսաբանուել հայ մամուլում եւ գրականութեան մէջ: Այս միտքը աւելի է բարձրացնում գրքի արժէքը եւ մեծացնում, կարեւորում հեղինակի դերը:

Գրքում նկարագրուած իրադարձութիւնները հարուստ են, համոզիչ ու պատճառաբանուած, հերոսները՝ բազմաբանակ եւ բոլորն էլ, անկախ ազգային պատկանելիութեան, իրական կերպարներ են, կերտուած տիպական հանգամանքներում:

Ընթերցողը հաւատում է հեղինակին՝ իրագեկ դառնալով գրքում ներկայացուած պետութեան ղեկավարների, կառավարութեան անդամների, բանակի հրամանատարների, բարձրաստիճան հոգեւորականների ու թագաւորների գործունէութեանը, քանի որ այն արուած է առանց գունազարդման կամ չափազանցութիւնների, իրենց մարդկային թերութիւններով ու թուլութիւններով: Ընթերցողը սրտի թրթիռով է կարողում Անիից արտագաղթի ժամանակ երկու եղբայրներ՝ Վասակի ու Արտաշէսի (Յովհաննէս Յեցեանի պապի) իրարից բաժանուելու եւ 70 տարի յետոյ արեան կանչով իրար գտնելու սրտածմլիկ պատմութիւնը: Մեծ հետաքրքրութեամբ է ընթերցում վարդանի (Յովհաննէս Յեցի հօր)

մարտադաշտում վիրաւորուելուց, անհետ կորածի պաշտօնական հարդորագրութիւնը յետոյ ողջ-առողջ ընտանիքի գիրկը վերադառնալու մասին պատմող դրուագները, որոնք ունեն համոզիչ մանրամասնութիւններ եւ բնորոշ են մեր ժողովրդի ճակատագրին: Հպարտութեան անսահման գագուցով է ընթերցում Յովհաննէս Յեցի պապին՝ Արտաշէսին, Լեհաստանի թագաւորին կողմից շնորհուած «Լեհաստանի Պատուոյ Ասպետի» տիտղոս շնորհելու, ոսկէ շքանշանով պարգեւատրելու, նրա ջանքերով եկեղեցիներ կառուցելու, քաղաքի զարգացմանն ու յառաջդիմութեան գործում մեծ ծառայութիւններ մատուցելու մասին պատմող տողերը: «Ոսկէ շքանշանի վրայ փորագրուած էին երկու Մասիները՝ իրենց առաջ ունենալով Անիի պարիսպը, իսկ նրանց առաջ՝ Քաջ վարդանի՝ ձիւ վրայ նստած», գրում է հեղինակը:

Բոլոր հայ հերոսների թիւ կուսքում գագուցում է հայ ժողովրդի հաւաքական կերպարի գոյութիւնը՝ իրեն բնորոշ յատկութիւններով՝ աշխատասիրութեամբ, շնորհաշատութեամբ, համարձակութեամբ, ուղղամտութեամբ, հաւատարմութեամբ, նուիրուածութեամբ՝ խօսքին, գործին, հայրենիքին, ընտանիքին:

Գրքում նկարագրուած են բազմաթիւ դրուագներ, էպիզոդներ, որտեղ հայ հերոսները իրենց վարքածգով ու գործողութիւններով հաստատում են այդ յատկանիշները:

Ուշագրաւ է այն, որ այդ նահատակութիւնների մասին արտայայտուած են այլազգի հերոսները՝ բարձր գնահատանքի խօսքերով:

Օրինակ՝ Նապոլիոնը, իմանալով որ վարդանը, Յովհաննէս Յեցի հայրը, որին իր արժանիքների համար վստահել էր իր անձնական անվտանգութեան գումարտակի հրամանատարի պաշտօնը, իմանալով նրա հայ լինելը, հաճելիօրէն զարմացած՝ հետեւեալ խօսքերով է արտայայտում համակարանքը. «...Ուրեմն դուք հայ էք, իմ կապիտան: Հիանալի ու մարդկութեան համար շատ պիտանի ցեղ է այդ հայկական ցեղը: Ես հանդիպեցի նրանց վեներտիկում: Այնտեղ, սուրբ Ղազարոս կղզում վանք ունեն եւ պատմագիտութեամբ են զբաղում: Հռոմի Պապն ուզում էր այդ կղզին խզել նրանցից, բայց շնորհիւ իմ գրած հրովարտակի՝ կղզին պատկանելու է նրանց յաւերժ»:

Կարծես նպատակ ունենալով ընդգծել, որ հայ ժողովրդին խորթ են երեսպաշտութիւնն ու ստրկամտութիւնը, հեղինակը մեծ վարպետութեամբ իր գրքում հայ ժողովրդի ուղղամտութիւնն ու հա-

մարձակութիւնը հաստատող դրուագներ է ներկայացնում, որ ընթերցողի մօտ հիացմունք է առաջացնում:

Օրինակ՝ Լվովի համալսարանի Պատաշէսի որոշման մասին լսելով Նիկիլ Եպիսկոպոսը այցելում է նրա տունը՝ համոզելու ետ կանգնել այդ մտքից՝ պատճառաբանելով որ այդքան լաւ գործեր անելուց, դպրոցներ հիմնելուց, եկեղեցիներ կառուցելուց յետոյ պէտք չի հեռանալ:

Արտաշէսը նայելով եպիսկոպոսի աչքերի մէջ, զսպուած ձայնով ասում է. «... Ես չգիտեմ, սրբազան, արդեօք Աստուած պիտի կարողանայ ներել ձեր գործած մեղքերը, բայց մէկ բանում վստահ եմ, որ մեր ազգը չպիտիների, քանի որ դուք ձեր կրօնաւորին ոչ վայել գործունէութեամբ փաստօրէն դաւաճանեցիք մեր ազգին վաճառելով նրան ձեր բարեկամ ձեզուիթներին...»: (Արտաշէսը (Յովհաննէս Յեցեանի պապը) նկատի ունէր Նիկիլի կամայականութիւնը, ստիպել ժողովրդին հրաժարուել լուսաւորչականութիւնից եւ ընդունել Հռոմի Պապի պահանջած ծէսերը):

Սակայն հայ ժողովրդի լաւագոյն յատկանիշների կոնկրետ մարմնաւորումը տրուած է գլխաւոր հերոսի՝ Յովհաննէս Յեցեանի միջոցով, որը վարդանի ու Շուշանի հինգ երեխաներից աւագ որդին էր: Հօր մահից յետոյ ընտանիքի հոգալ թեթեւացնու համար հինգ տարեկան Յովհաննէսին միջնորդութեամբ ընդունում են գինուորական գիշերօթիկ ուսումնարանի նախակրթարան դասարանը: Եօթ տարի այդ դպրոցում ուսանելուց յետոյ Յովհաննէսը ընդունում է Վիեննայի գինուորական բարձրագոյն Ակադեմիան, որն աւարտում է գերագանց գնահատականներով եւ 1842 թ. Սեպտեմբերի 9-ին Աւստրիայի կայսր Ֆերդինանդի գրուած հրովարտակով տրուած է Ա. կարգի լեյտենանտի աստիճանը եւ ուղարկում ծառայութեան Կրոնզդատ քաղաքը, որտեղ ապրում էր նրա մայրը՝ միւս երեխաների հետ:

1848 թ. իր արդիւնաւէտ ծառայութեան համար կանչում են Վիեննա եւ բարձրացնելով նրա գինուորական աստիճանը փոխգնդապետի՝ նշանակում Ռազմական ուսումնարանի տնօրէն: Քսանհինգ տարեկանում արդէն իր գործերով ամբողջ Աւստրիական կայսրութեան մէջ յայտնի դարձած գնդապետ Յանուշ Յեցը յանձնարարութիւն է ստանում կազմակերպել Հունգարական բանակը: Քսանեօթ տարեկանում (1849 թ.) գեներալ

Շարք էջ 15

ԹԷՔԷԵԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ
 ՓԱՍՍՏԻՆԱ - ԿԼԷՆՏԷՅԼ ՄԱՍՆԱԾԻՂ

Կը ներկայացնէ՝
ԿԱՏԱԿԻ ՄԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Կատարողութեամբ՝
Գրիգոր Ասքանեանի

Կիրակի, 15 Յունիս 2008, երեկոյեան ժամը 5:00-ին
 Ալթադենայի Պէշկոթիւրեան կեդրոնին մէջ
 1901 N. Allen Ave., Altadena, CA 91001
 (Corner of New York Dr.)

Տոմսերու համար հեռաձայնը՝
 Սիլիքոն (626) 564-9171
 Աստղիկ (626) 355-3897

Մուտքի նուէր՝ \$40 (ներստեալ ընթրիք)

ԳՐԻԳՈՐ ՏԱՅԵԱՆ

Շարունակում էք 14-էն

դարձած Յեցի կրծքին փայլատակում, Հունգարական կոնգրեսի պարգևատրած «Հերոսութեան համար» շքանշանը, սակայն հունգարական լեզվափոխութիւնը դաւաճանութեան հետեւանքով պարտուելու պատճառով ստիպուած էր եղել հեռանալ Հունգարիայից եւ շուրջ տասը տարի ապրել Եւրոպական երկրներում եւ ամուսնանալով արժենթինահու հետ, մեկնում է Արժենթինա, որտեղ Վիեննայի ռազմական ուսումնարանում ստացած գիտելիքների հիման վրայ քննութիւն է յանձնուած եւ ստանալով երկրաչափի դիպլոմ, շուտով յայտնի է դառնում «Ժամանակակից երկրաչափ» անունով: Շուտով Պոլէնոս Այրեւսում նրան վստահուած է Ռազմական ուսումնարան ստեղծելու պատուաւոր դերը, որը նա իրականացնում է մեծ գոհողութիւնների գնով: 1874 թ. Արժենթինայի Պարոնա քաղաքում նրա առաջարկում են տեղագրական ինստիտուտի նախագահի պաշտօնը, որ նա վարում է այնպէս, որ շուտով այդ նահանգը վերածուած է Արժենթինայի ամենակազմակերպուած ու հարուստ նահանգի: Միեւնոյն ժամանակ Յեցը դառնում է մի քանի քաղաքների մաթեմատիկոսի ճանաչուած ուսուցիչը եւ նահանգում եղած բարձրագոյն ուսումնական հաստատութիւնների քննական յանձնաժողովի մշտական նախագահը արդէն վաթսուներեց տարեկան դարձած դեռ պրակտիկ աշխատանքների ձեռնարկներ, դասագրքեր ու ուսումնական յօդուածներ էր գրում իր հիմնած գիտութեան ուսումնարանի համար՝ ասելով. «Մենք պէտք է հետեւենք գիտութեան անընդհատ առաջադիմութեանը եւ ոչ թէ գիտութիւնը մեզ»: Յեցը իր կեանքի վերջին տարիներին վարում էր Ռազմածովային ուսումնարանի Տոպոգրաֆիկական ամպլինի վարիչի պարտականութիւնները:

1904 թ. Արժենթինայի պատրաստում էր տօնելու իր անկախութեան 88-րդ տարեդարձը, որի կապակցութեամբ քաղաքի գլխաւոր հրապարակում պիտի կատարուէր գիտութեան շքերթ, որը պիտի ընդունուի հանրապետութեան ռազմական մինիստրի կողմից: Որպէս իր ծառայութիւնների ճանաչում, բանակի գլխաւոր հրամանատարը, որն եղել էր Յեցի լաւագոյն աշակերտներից մէկը, ինդերել էր 82 տարեկան արդէն պաշտօնաթող եղած Արժենթինայի բանակի գնդապետ, հանրապետական բանակի գեներալ Յեցին, որ անձամբ ընդունի գլխաւոր հրամանատարութեան ինժեներական անձնակազմի տղանը: Այդ շքերթին Յեցը ներկայացաւ իր տօնական համագրեւորով, որի վրայ գետեղուած էին Վիեննայի ռազմական ակադեմիայում գերագնացութեան համար ստացած մետալները «Հերմանշտադի ասպետ» եւ նրա գրաւման համար մղուած ճակատամարտում իր տարած յաղթանակների եւ այլ ճակատամարտերի ցուցաբերած հերոսութեան համար ստացած շքանշանները: Դա վերջին հանդիսութիւնն էր որին մասնակցեց Յեցը եւ վաղեմի իրեն յանձնարարուած մասը կատարելու մէջ: Հիւանդանալով թոքերի բորբոքումով, 1904 թ. Սեպտեմբերի 6-ին առյաւէտ փակուած է աչքերը, մահից առաջ կրտսեր աղջկան յանձնելով արծաթեայ ծխախոտատուփը, որի մէջ մատուցելի պէս պահել էր իր

ծննդավայրի հողը այդքան տարիներ աչքի լույսի պէս, որպէս իր հայրենիքից, հարազատներից մի թանկարժէք մատուցեց, ինդերելով իր դազադի մէջ դնել այդ հողը, որ միշտ իր հետ լինի: Այդպէս կեանքից հեռացաւ մեծ սրտի տէր, ծագումով հայ մարդը, Յովհաննէս Յեցը, որի ապրած ողջ կեանքի սկզբունքը եղել էր հաւատարմութիւնը, այդ սկզբունքով առաջնորդուելով Արժենթինայ ընդունել էր որպէս իր շրջ հայրենիքը եւ իր ողջ կարողութիւնները, գիտելիքները ծառայել նրա բարգաւաճման համար: Նրա դազադը տեղադրուեց Ռազմական ուսումնարանի նոր շէնքի մատուռում, Արժենթինայի բանակի համագրեւորով: Յեցի կրծքին նրա դուստրը մի փոքրիկ տոպրակի մէջ դրել էր հունգարական հողը, ինչպէս ինդերել էր հայրը: Ռազմական մինիստրութեան որոշմամբ Բեցի դիակը պիտի թաղուէր իր հիմնած Ռազմական ուսումնարանի բակում: Թաղումը կատարուեց շատ հանդիսաւոր ու մարդաշատ:

Թնդանթատար կառքը, որի վրայ գետեղուած էր Յեցի դազադը, պատուոյ շքախմբի ուղեկցութեամբ ուղղուեց դէպի նրա վերջին հանգրուանը:

Գերեզմանափոսի առաջ նրա ուսանողներից մէկը գնդապետ Մալդոնեցը, կրակոտ ճառ ասաց նրա յիշատակին. «...Նրա անհաւատալի ամենագիտութիւնը նրան դարձրել էր մեր մաթեմատիկոսի, աշխարհագրութեան եւ միւս առարկաների փրոֆեսոր ու անվիճելիութեան չափերի է հասցրել նրա հեղինակութիւնը իր աշակերտների մէջ: Միւրեւի ուսուցիչ, մենք քո աշակերտները եւ մեզ հետ միասին նաեւ Արժենթինայի բանակը երբեք չենք մոռանալու քեզ»:

Փողային նուագախմբի հրաժեշտի մեղեդիները, յետագային Յրդ գումարտակի գիտութեան համագրակերի տակ հողին յանձնուեց մեծ ու յարգուած ու բոլորի կողմից սիրուած գորավարի մարմինը:

«Ներկաները իրենց արեւոյ յետեցին մի բուռ հող, հրաժեշտ տալով այդ մեծ սրտի ու վեհանձն հոգու տէր հայ մարդուն, ազատութեան եւ ժողովուրդների միջեւ բարեկամութեան համար, պայքարի մարտիկին, Շիրակայ դաշտերում ու Ախուրեան գետի ափին եղած պատմական Անի քաղաքում սկիզբ առած գերդաստանի եւ հունգարական Գիրովալֆա քաղաքում ծնուած, հունգարացի անկախութեան համար պայքարած ու ճակատագրի բերմամբ Արժենթինա հասած ու իր ջանքերով նրա բարգաւաճմանը մեծապէս նպաստած Յովհաննէս Յեցեանին»:

«1937 թ. Արժենթինայի ունեցաւ Ռազմական ուսումնարանի նոր շէնք, որի ներսում ստեղծուած թանգարանում տեղադրուած են Յովհաննէս Յեցի որոշ ձեռագրեր, գրքեր հրամանագրեր եւ փոքրիկ ամաններ իր մէջ իր ծննդավայրի ու Հունգարիայում իր վարած ճակատամարտերի վայրերի հողերից, որոնց հերոսն է համարուել եւ համարուած է հիմա. Գրուած է հեղինակը. «Նրա անունով փողոցներ կան Պոլստապեշտում, Հունգարիայում եւ Լեհաստանում նրա գիմանակարներով դրոշմանիշեր են տպուել»:


Եւ աւարտելով Յովհաննէս Յեցի կեանքին վերաբերող իր գիրքը՝ հեղինակը հպարտութեամբ շեշտում է այն միտքը, որ ցեցեաններ մեր ազգը անցեալում ունեցել է եւ

ՄՍԱՑՈՒԱԾ ԵՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԵՐ ԿԵԱՆՔԻ ՈՒՂԻՆ ԴԵՊԻ... Ռ. ԿՈՐԻՆ (ՈՒՐԲԵՆ ԲԵՇԻՇԵԱՆ)

Ընթացիկ տարուան մէջ լոյս ընծայուած «Մեր Կեանքի Ուղին Դէպի...» հատորը՝ «Մասիս» շաբաթաթերթի հետեւողական աշխատակից Ռ.Կորինի անդրանիկ հրատարակութիւնն է, որ կը պարունակէ, ինչպէս իր նախաբան խօսքին մէջ պիտի ըսէր ան «Իմ կարողութիւններով խմբագրած եւ հրատարակած դրութիւնները»:

Հեղինակը՝ իր 289 էջերէ բաղկացած պատկերազարդ ներկայ հատորին մէջ, գոր ողբիական խորը սէր ու ակնածանքով կը ձօնէ իր ծնողաց, մեծ հօր ու մեծ մօր ու հօրեղբայրներուն՝ կը շօշափէ կրթական (Մեր Դպրոցը Լուսոյ Տաճար, հայոց Դպրոց տուն յաւերժութեան երթի ձամբայ, Ուսման սէրը, Դասադուլ, աշակերտութեան ուղղուած գրութիւններ), ազգային պահանջատիրական պայքարի (Յեղասպանութիւնը երբեք արդարացում չունի), ազգային միասնութեան (Ղօղանջ սիրոյ յանուն միասնականութեան), տիպար մարդու (Օրինակելի մարդը իր ապրած կեանքով), յուշագրական (Թեհրանից դէպի Հայաստան) մտորումներ, որոնք աւելի կ'ընծայեն ընթերցողին մտածելու:

Գիրքին մէջ նաեւ տեղ գրաւած են պատմուածքներ (Մեր տան բնակիչ Քաւոր Ապրամը, Փրկա-



րար Հայը, Անբարոյ կեանքի տխուր վախճանը), եւ անձնական նամակներ, որոնք գրուած են ջերմութեամբ եւ հաղորդականութեամբ: Ակնբախ է հեղինակին «Մեր Կեանքի Ուղին Դէպի...» գրքին մէջ ընդհանրապէս տիրական անկեղծութիւնը, քննարկումներու, հետեւութիւններուն առարկայականութիւնը եւ թելադրական խորքը, որոնք հաճելի կը դարձնեն ընթերցանութիւնը:

Հռոմէական կայսրութեան մէջ, եւ հին Յունաստանում, եւ Բիւզանդական կայսրութիւնում եւ Պարսկաստանում ու Հնդկաստանում:

Գրքի յառաջաբանում հեղինակը հանգամանօրէն ներկայացնում է այն սկզբնաղբերների ցանկը, որից օգտուել է գիրքը գրելիս: Այս հանգամանքը վաւերացնում ու համոզիչ է դարձնում վէպում նկարագրուած դէպքերն ու իրադարձութիւնները, իրական հերոսները:

Հեղինակ յառաջաբանն աւարտում է «Այն ազգը, որ յիշողութիւն չունի, ապագայ ունենալ չի կարող» նշանաւոր ասոյթով, որն այս յօդուածի համար բնաբանի դեր կարող է ծառայել: Գիրքը կարդալու ընթացքում եւ յետոյ ընթերցողը վերապրում է հպարտութեան այն ծանօթ գզացումը, որն յատուկ է մեր փոքրաթիւ ժողովրդին, որը ճակատագրի դատապարտուածութեամբ ամէն դարավերջի ստացած տնտեսական-քաղաքական ճշտուածութեան կամ պատերազմական արհաւիրքի պատճառով դառնում է տնակէր, տարագիր, ցրուելով տարբեր եռոնոյեր, այդ առումով շփուելով տարբեր ազգերի հետ, սակայն չի տարալուծուած նրանց մէջ:

Եւ այդ հպարտութեան գզացման յարուցման համար կոնկրետ դէպքերում ընթերցողը պարտական ու երախտագէտ է Գիրգոր Տայեան հեղինակին, քանի որ նա ինքն էլ մի տարագիր հայրդի է, որ ՅՈ-ից աւելի տարիներ հանգամանքների բերումով բնակուելով Պոլէնոս Այ-

րեսում, իր մասնագիտութեան գծով ամբողջ Արժենթինայի մասշտաբով այնքան օգտակար գործեր անելիս անհշուտով այլազգի մարդկանց հետ, իր հոգու խորքում անթեղուած կրակի պէս վառ է պահել իր ազգի, իր ժողովրդի, իր հայրենիքի հանդէպ ունեցած պարտքի ու նուիրուածութեան գզացումը եւ պատկառելի տարիքում իր կոչմանը հակառակ միանգամայն անշահախնդրօրէն ձեռնարկել է մի պատասխանատու եւ հայրենասուէր գործի, մոռացութեան ճիրաններից փրկելով եկող սերունդներին փոխանցել արժանաւոր հայի կեանքի պատմութիւնը՝ հետապնդելով միայն մէկ նուիրական նպատակ, վառ պահել մեր ժողովրդի յիշողութիւնը:

Անասման հիացմունքով ու ակնածանքով լցուելով հեղինակի հանդէպ, ակամայ մտածում ես եթէ ամէն տարագիր հայ եթէ ոչ ստեղծագործել, իր ազգի մասին պատմող ստեղծագործութիւնները իր մայրենի լեզուով կարդալու ձգտումն ու կարողութիւնը պահպանելու ձեռով հաւատարիմ լինի իր ծագմանը, ապա անկասկածելիօրէն կարելի է հանգիստ լինել այն մտքից, որ մեր ազգի յիշողութիւնն ու ապագան ապահոված է, որքան էլ որ նա արտագաղթի ու որտեղ էլ որ նա ապրի:

Յանկանք Գիրգոր Տայեան ընտիր հեղինակին ստեղծագործական աւելն ու բեղմնաւոր, գործունէութիւն, իր նոր կոչման արժանապայքը ստեղծագործողի աշխատանքային բնագաւառում:

Չեր Ծանուցումները Վստահեցեք
«Մասիս» Շաբաթաթերթին
 T: (626) 797-7680 F: (626) 797-6863
 massis2@earthlink.net
 www.massisweekly.com

ՁԵՄԻՐԷ

Շարունակուած էջ 7-էն

ստեղծել:

«Ձէմիրէ» իբրեւ կառույց ունի 4 արարներ:

ա. արար - Չայպաշի-մոզական աղբիւրի մօտ, որուն ջուրը կը վերածուի սիրային կենսաջուրի մը (love elixir):

բ. արար - կախարդ էպուտտ-իայի քառայրը:

գ. արար - «Ձէմիրէ»ի հօրը տունը

դ. արար - Պենեգարի պարտէզը:

Այս չորս արարներու մէջ տեղի կ'ունենան «Ձէմիրէ»ի եւ էլլասան-թուրի արկածանդուութիւնները: Այս երկուքը միակ գաւակներն են երկու հարուստ ցեղապետներու, որոնք արկածով մը, իրարու կը հանդիպին աղբիւրի մը մօտ, որուն ջուրը, կախարդ էպուտտիայի միջոցաւ, կը վերածուի սիրային կենսաջուրի, եւ երիտասարդները իրար կը կապուին

ԴԵՐԱՍԱՆԱԿԱՆ ԽԱՂԸ

Մենք որ օփերայի հետեւող եւ ծանօթ համաշխարհային այնպիսի երգիչ-երգչուհիներու, որոնք հռչակաւոր անուններ ունին - Քառուզօ, Ճիկլի, Պիորլինկ - հիներէն, իսկ Փաւարօթի, Տոմինկօ, Քարերաս՝ նորերէն, իսկ իրականներու պարագային, Քալլաս, Տը Լոս Անճելլոս, Նորմըն, Թեպալտի, Ֆլեմինկ, Պարթօլի եւ ուրիշներ պիտի խոստովանինք որ այս համաշխարհային ճանաչումի արժանացած երգիչ-երգչուհիներու հետ բախդատելով «Ձէմիրէ»ի մասնակից հայ երգիչ-երգչուհիները կարողացան վայելքի չափով պահել ստեղծել, միշտ արդար եւ չափաւոր համեմատութիւններու մէջ պահելով մերիներուն կատարումները: Այսպէս, «Ձէմիրէ»ի դերին մէջ, Անի Մալճեանը կարողացաւ մեզի փո-



անկեղծ սիրով մը: Ձէմիրէի եւ էլլասան-թուրի կողքին, կայ գաւազտական, ծաղրաշարժ Աթալմուքը, էլլասան-թուրի կողմէն: Միւս նկարագիրներն են Ռեպիան, Ձէմիրէի մօր դերով, Սուհէյլան՝ Ձէմիրէի ընկերուհին, էպուտտի ցեղապետի դերով, Պենեգար՝ Ձէմիրէի հօր դերով, ինչպէս նաեւ բազմաթիւ երեսակայական, կախարդական, գերմարդկային նկարագիրներ, եւ դիւթիւ բնութիւն, եւայլն:

Չուխաճեանի Ձէմիրէի երաժշտութիւնը յատկանշուած է լիրիքական տրամադրութեամբ, բոմբաստանիք «արիա»ներով, հաճելի եւ առողջ գուգերգ-քառականերով, մանաւանդ խմբային, արտայայտիչ կատարումներով: Ընդհանուր երաժշտութիւնը լեցուն է զգացական յորդուն արտայայտութիւններով: Բնական եւ «ֆանթաստիք» տեսարաններու երաժշտական ձեւաւորումները փողային եւ լարային գործիքներու ընկերակցութեամբ, նոյնիսկ կայծակնային եւ որոտումնային արձագանգներով մոզական անուրջային մթնոլորտներ կը ստեղծեն: Ի վերջոյ, պէտք է միշտ մտաբերել որ Չուխաճեան սնած է Եւրոպական դասական երաժշտութեան, մանաւանդ իտալական, Պէլ Քանթոյի աւանդութիւններով, եւ չէր կրնար տարբեր երաժշտական յորինումներ

խանցել իր նուրբ եւ զգայուն դերին պահանջած ապրումները, թէ ուրախ եւ թէ տխուր պահերու ընթացքին: Շողիկ Գուշաքճեան հրաշալի մեցցօ մըն է, ինքզինք լաւապէս պարտադրող: Իր զգայուն դերը հրաշալի կատարեց: Էլլասան-թուրի դերով Սուրէն Մկրտիչեան փնտռուած կատարողն էր բեմի վրայ, ինք եւս գրաւիչ արտաքինով եւ սպաւորիչ ձայնով: Արտաշէս Հայրիեան, էպուտտիայի երկար, դժուար դերով, յաջողեցաւ հանդիսականներու ուշադրութիւնը իր վրայ կեդրոնացած պահել եւ զեղեցիկ պարիթոն ձայնով առինքներ մեզ: Աթալմուքը, Ռուբէն Թեգուճեան, հրաշալի եւ փնտռուած ներկայութիւն մըն էր եւ բեմի վրայ, մեծապէս մասնակցելով «Ձէմիրէ»ի յաջողութեան: Անվիճելի են իր ձայնային եւ դերասանական արժանիքները: Շուշիկ Պարսումեանը, Սուհէյլայի պատասխանատու դերին մէջ լաւապէս տարաւ իր զգային առաքելութիւնը: Էպուտտիայի դերով Ռաֆայէլ Թեւրուճեան, Պենեգարի դերով՝ Անահիտ Հէլէպի, իսկ Նատարի դերով «Հըրպըրթ Սարեան», իւրաքանչիւրը յաջող կերով կրցան դրսեւորել իրենց ստանձնած դերերուն պահանջները, թէ ձայնային եւ թէ

թատերական խաղարկութեամբ: Մեծապէս գնահատելի էին խմբային կատարումները թէ շարժումային եւ թէ խմբերգային իմաստներով: Պէտք է խոստովանիլ նաեւ որ ձայնային փոխանցման «թեքնիքները» իրապէս արհեստավարժ կերպով կարգադրուած էին, եւ ներկաները երբեք զանգատելու առիթ չունեցան:

Բեմի հետ առնչուած միւս բոլոր մանրամասնութիւնները անթերի կերպով հրամցուեցան: Այսպէս տեքորը, Ֆելիքս Եղիազարեան, մանաւանդ տարագներու ճոխութիւնն ու պատշաճեցումը՝ Անահիտ Հալապի, տեսարանային լաւագոյն մատուցումը, Ռաֆֆի Մուսախանեան, մանաւանդ արաբական զեղեցիկ պալէի կատարումը՝ Սոնա Աւետիսեան, բեմի լուսաւորումը, Սեւակ Պեքմեզեան, դիմաշարադարումը՝ մեր վաղեմի մասնագէտ Նազարէթ Աջապահեանի եւ իր օգնականներու կողմէ մեծապէս օգնեցին «Ձէմիրէ»ի պահանջած մթնոլորտ ստեղծելու:

Տակաւին պէտք է չիշել դերակատարներու խումբը, Սօսի Վարժապետեան, Յարութ եւ Խաչիկ Ֆաքճեան, Յարութ թուժայեան, Նարինէ եւ Նարեկ Աւագեանները եւ Ռոճըր Թովմաս - իւրաքանչիւրը իր դերին մէջ նպաստեցին ներկայացման լրիւ յաջողութեան:

Բեմական, թատերական խաղը արդիւնք էր Գրիգոր Սաթամեանի փրոֆեսիոնալ ճաշակին եւ հասկացողութեան, կարենալ բեմի վրայ ստեղծելու համար «Ձէմիրէ»ի պահանջած մթնոլորտը: Թէ անհատական եւ թէ մանաւանդ խմբային կատարումներու ընթացքին, Սաթամեանի ոճը որոշապէս նշմարելի էր, իր չափաւորութեան եւ ներդաշնակութեան մէջ: Նման հսկայական նախաձեռնութեան մը յաջողութիւնը կարելի էր ձեռքբերել Գրիգոր Սաթամեանի նման վաւերական հեղինակութեան մը մասնակցութեամբ:

Ի վերջոյ կը հասնիմ «Ձէմիրէ»ի յաջողութեան ետին կանգնած մաէսթրօ Վաչէ Պարսումեանին: Իր տարիներու վրայ երկարող խմբավարական գործունէութեան համար, ես պիտի համարձակիմ, յատկապէս «Ձէմիրէ»ի յաղթանակէն ետք, մաէսթրօն նմանցնել 20րդ դարու մեծ խմբավարներու: Թերեւս այս հսկաներուն «գործը» աւելի հեշտ էր, այն իմաստով որ իրենք սոսկական խմբավարութեան

կը նուիրուէին, հրաշալի կերպով, իրենց համար ամէն ինչ արդէն պատրաստ կ'ըլլար: Կը մնար իրենց ձայնը ձեռք առնել եւ նուագախումբը ղեկավարել: Վաչէին պարագային, մանաւանդ «Ձէմիրէ»ի երաժշտական score»ը պատրաստել, գայն նուագախմբի համար տրամադրելի եւ հասկնալի դարձնել ուղղակի հերքելուան աշխատանք պիտի ենթադրէր, ինչ որ յաջողեցաւ ընել ինք: Տիգրան Չուխաճեանի երբեմն անկատար, յաճախ անընթեռնելի «score» վերածել 45 հոգինոց օրքեսթրայի մը համար, կատակ չէ, եւ կ'ենթադրէ ոչ միայն ղեկավարական, այլ երաժշտական ստեղծագործական աշխատանք: Իսկ եթէ ասոր վրայ աւելցուի իր թարգմանական գործը, տարբեր չորս լեզուներէ հայերէնի վերածման նուրբ աշխատանքը, արդէն իսկ կ'ունենանք մտաւորական աշխատանքի տիպար մը, իր ղեկավարութեան կողքին:

Իսկ իր ղեկավարութիւնը «Ձէմիրէ»ի ընթացքին, ինչպէս միշտ, այս անգամ եւս, սպաւորիչ եւ հարագատ էր Չուխաճեանի ստեղծած գլուխ-գործոցին: Վաչէն ուղղակի եւ ամբողջական հաղորդակցութեան մէջ էր թէ նուագախմբին, որմէ կը ստանար իր պահանջած կատարումը, բոլոր գործիքային մասերէ, եւ թէ բեմի վրայ գործողութեան մասնակցներէն, շարունակ ընկերակցելով իրենց երգային բաժիններով: Մէկ խօսքով «Ձէմիրէ»ն իր ամբողջական կազմով - նուագախումբ, սօլիստներ, խմբային կատարողներ, կը գտնուէին իր ամբողջական հակակշիռն տակ, որ իստահաւանաբար, իր ղեկավարական տաղանդին հիմնական նախապայմանը կը հանդիսանայ: Անգամ մը եւս, մաէսթրօ, այս յաջողութեան շնորհիւ, Տիգրան Չուխաճեանի ոսկորները կրնան հանգիստ ընել հողին տակ, եւ իր հոգին 120 տարիներ ետք, կրնայ խայտալ անմահութեան մէջ, անդրադառնալով որ կան տակաւին Հ.Բ.Լ.Մ.ի նման միութիւններ, «Լարք»ի նման երաժշտական ընկերակցութիւններ, որոնք սաթամեաններու, պարսումեաններու եւ իրենց նման սրբազան խենթեր օրն ի բուն կը ճգնին բարձր պահելու հայ ժողովուրդի սրբազան ժառանգութիւնը:

Վարձքը կատար բոլորին...

Palm Springs

PALM SPRINGS ԱՐՉԱԿՈՒՐԴԻ ՔԱՅՈՂ ՉԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ

Փալմ Սփրինգս գեղատեսիլ եւ կից լեռնային շրջանին, վարձու է տրուում լրիւ կահաւորուած մէկ ԳՆՉԱՐԱՆ, մեծ ԳՍՏԱՍԵՆՏԱԿ, խոհանոց՝ բոլոր յարմարութիւններով, մինչեւ 5-6 հոգի գիշերելու տարողութեամբ Condo: Ունի մեծ լողաւազան, ջաքուզի, թեմիսի խաղաղաշտ, կանաչազարդ փիքնիքի տարածք, իր յատուկ կրակաւորաններով եւ 24-ժամեայ ապահովութեան սիստեմ:

Վարձման գներն են՝	
Ուրբաթ, Շաբաթ եւ Կիրակի՝	\$ 400
Long Weekend-ների համար՝	\$ 500
Մէկ շաբաթուայ համար՝	\$ 675
Մէկ ամսուայ համար՝	\$ 1450

Մանրամասների համար հեռաձայնել՝
(818) 246-0125



ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻ ՀԱՄԱՐ)

ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA
ՀԵՌԱՉԱՅՆԵԼ (626) 797-7680

ՔԱՐԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՕԾՈՒՄ

Շարունակում է 8-ԷՖ

ծայեակներուն տուլա Սուրբ Պատարագի զգեստի զանազան մասերը: Ապա ընծայելաները քահանայական լրիւ հանդերձանքով ներկայացան Սրբազան Հօր: «Առաքելոյ Աղաւնոյ» շարականի երգեցողութենէն ետք, խանդավառ եւ չափազանց յուզումնալից միջնորդութիւն մէջ եւ համայն հաւատացեալներու «Ամէն. ալիլուիա» երգեցողութեան մասնակցութեամբ, Սրբազան Հայրը Սրբալոյս Միւռնոնով օծեց Մալիս Սարկաւազին ճակատը, աջ ու ձախ ափերը՝ զինք վերակոչելով Տ. Խաժակ Քահանայ: Ապա Սրբազան Հայրը Սրբալոյս Միւռնոնով օծեց վահէ Սարկաւազին ճակատը, աջ ու ձախ ափերը՝ զինք վերակոչելով Տ. Աւետիս Քահանայ:

Սրբազան Հայրը հոգեկան ցնծութեամբ եւ միխթարուած սրտով, տուլա իր սրտաբուխ պատգամը:

«Տարիներ շարունակ ուսումնառութեամբ եւ հոգեւոր դաստիարակութեամբ դուք ձեր հոգին մշակեցիք Քահանայական սրբազան կոչումով ու աստուածգիտութեան շունչով եւ այսօր հաստատ, խրոխտ, խոնարհ հպարտութեամբ ու հաստատակամ կը միանաք Հայ Եկեղեցւոյ զինուորեալ միաբանութեան շարքերուն, որպէսզի բերէք ձեր խօսքն ու պատգամը, որ ուրիշ բան չէ, եթէ ոչ Աստուծոյ կողմէ ձեզի շնորհուած պարգեւը, որը բաշխելու պարտականութիւն ունիք»:

Սրբազան Հայրը ողջունեց ներկայութիւնը Հայաստանի Հանրապետութեան Լոս Անճելըսի Գլխաւոր Հիւպատոս՝ Տիար Արմէն Լիլոյեանի:

Սրբազան Հօր հրաւերին ընդառաջելով, արարողութեանց ներ-

կայ գտնուեցաւ Յոյն Օրթոտոքս Եկեղեցւոյ Մետրոպոլիտ Գերշ. Տ. Կերասիմոս Արքեպիսկոպոս, որուն կ'ընկերանար Լոս Անճելըսի Սուրբ Սոֆիա Յոյն Օրթոտոքս Եկեղեցւոյ Հոգեւոր Տեսուչը՝ Հայր ձան Պաքաս: Սրբազան Հայրը իր գոհունակութիւնը յայտնեց նուիրեալ այս հոգեւորականներու ներկայութեան համար, ապա բեմ հրաւիրեց Մետրոպոլիտը, որպէսզի իր սրտի խօսքը ուղղէր նորընծաներուն:

Մետրոպոլիտը շնորհաւորեց նորած քահանաները, շեշտեց կոչման անհրաժեշտութիւնը, բնով թէ Աստուած է որ կը կոչէ իր հոգեւոր սպասաւորը: Յոյս յայտնեց, որ նուիրեալ եւ Աստուածաբանութիւն ուսանած նորընծաները հաւատքով եւ հաստատակամութեամբ պիտի ծառայեց Հայց. Եկեղեցւոյ եւ Հայ Ժողովուրդին:

Մետրոպոլիտի խօսքէն ետք, նախ Սրբազան Հայրը եւ ապա բոլոր հոգեւորականները եւ Սուրբ Սեղանին սպասարկողները, մի առ մի մօտենալով համբուրեցին նորած Տ. Խաժակ Քահանային եւ Տ. Աւետիս Քահանային ճակատն ու ձեռքերը:

Արժ. Տ. Խաժակ Քհնյ. Շահպազեանի Կնքահայրն էր Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ՝ Պըրպէնքի Մուխի հաւատաւոր անդամներ եւ Բարերարներ՝ Տէր եւ Տիկին Միսակ Նազարեան: Իսկ Արժ. Տ. Աւետիս Քհնյ. Աբովեանին Կնքահայրն էր՝ Հալիվուտի Սուրբ Յովհաննու Կարապետ Հայց. Եկեղեցւոյ անդամներ եւ Բարերարներ Տէր եւ Տիկին Նշան Պլիկեան:

Մեծ թիւով հաւատացեալներ Սուրբ Հաղորդութիւն ստացան Սրբազան Հօրմէն, ապա նորընծայ քահանաներուն ձեռքը համբուրեցին եկեղեցւոյ դասին մէջ:

ՍԱՐԱԿ-ՄԵՍՐՈՊ ՎԱՐԺԱՐԱՆԻ 28-ՐԴ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԿԵՐՈՅԹԸ

Շարունակում է 8-ԷՖ

ղեցիկ երգերով եւ մի քանի կատարներով, արժանանալով ներկաներու բարձր գնահատանքին:

Գեղարուեստական բաժնէն ետք, հոգաբարձութեան ատենապետ պրն. Արա Ասիլեան ներկայացուց օրուան գլխաւոր բանախօսը՝ յայտնի իրաւաբան ճորճ Ֆիլիպսը, որ երկար տարիներու հոգաբարձու է Ամերիկայի հայ աւետարանչական ընկերակցութեան եւ Հոլիվուտի Միացեալ հայ Ժողովական եկեղեցւոյ, բարձր գնահատելով այն գործօն դերը, որ Ֆիլիպս ունեցած էր դպրոցի նոր կալուածի գնման ընթացքին: Ֆիլիպս խօսք առնելով խիստ կարեւոր նկատեց հայ աշակերտին, հայ քրիստոնէայ վարժարան յաճախելու անհրաժեշտութիւնը:

Նկատի ունենալով, որ դպրոցի մէջ կը պահպանուին ազգային եւ մշակութային արժէքներ, կը դասաւանդուի Աստուածաշունչը, որոնք էական են կերտելու ապագայի լաւ անհատներ:

Ապա, տնօրէն Շահէ Կարապետեան յանձնեց «գնահատանքի յուշանուէրներ» նախ Փասատինայի Նազովրեցի առաջին եկեղեցւոյ, չորս տարիներու իրենց որոշ շէնքերը «Սահակ-Մեսրոպ» միջնակարգ եւ բարձրագոյն վարժարանի աշակերտութեան տրամադրութեան տակ դնելուն համար, եւ ապա Արա Ասիլեանին, տասը տարիներու »Սահակ-Մեսրոպ« վարժարանի հոգաբարձութեան, որպէս գանձապահ եւ

ատենապետ ծառայութեան համար: Պրն. Արա Ասիլեան, ընդունելով պարգեւը, հրաւիրեց հիւրերը, որպէսզի մեծ թափով մասնակցին դրամահաւաքի աշխատանքին, որպէսզի յաջորդ քանի մը տարիներու ընթացքին փորձեն թեթեւցնել վարժարանի նիւթական ծանր պարտաւորութիւնները:

Ան նշեց թէ կարելի է բարերար դառնալ վճարելով ութ շէնքերէն մէկուն գինը, որ կրնայ վերակոչուիլ նուիրատուին անունով, կամ վճարել նոր կառուցուելիք դասարանի մը, գիտական տարալուծարանի մը, մարզասարահի կամ հանդիսասարահի ծախսերը, աշակերտի մը կրթութոյն կամ որոշ գումար նուիրել ընդհանուր հիմնադրամին: Սոյն ճաշկերոյթին, տարբեր ծանուցումներէ, եկեղեցիներէ եւ առատաձեռն բարերարներէն գոյացաւ 100,000 տոլար դպրոցիս հիմնադրամին:

Երեկոն փակեց Գերաշնորհ Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի ներկայացուցիչ՝ Հոգշ. Տ. Պարթեւ վրդ. Կիւլիւմեան: Ան շեշտեց քրիստոնէական դաստիարակութեան յոյժ կարեւորութիւնը, որպէս ամուր հաւատքի կերտիչ: Հայր Պարթեւի պահպանիչով ներկաները գուարթ եւ վերանորոգուած սրտով մեկնեցան սրահէն:

Հոգաբարձութեան, տնօրէնութեան, ուսուցչակազմի եւ պաշտօնէութեան անունով կ'ուզենք մեր սրտագին շնորհակալութիւնները յայտնել՝ ծնողաց, հիւրերուն եւ համակիր ներկաներուն:

ԵՐԵՎԱՆԻ ԿԱՐԾԵՍ...

Շարունակում է 13-ԷՖ

մարգարաշտը, բարերարին եւ ապա՝ տնօրէններուն վրիլան, ու կը ծնրադրեմ Գրիգոր եւ Կարապետ Մելքոնեան եղբայրներու դամբանին առջեւ, այնտեղ՝ ուր իրենք հոգիններուն ի հանգիստ ամէն Շաբաթ երեկոյեան երգեցինք «Տէր Ողորմիւ», «Ի վերին Երուսաղէմ», եւ «Հայր Մեր», այնտեղ՝ ուր ամէն ամառները իրենց ստացած Չահր յանձնեցին յաջորդ դասարանին:

Ճիշդ է թէ յրբեք չունակեալ տարիները աւելի մեծ շուքով կը նշուին, սակայն մեղքներէն յաճախ, տար-

բեր առիթներով, կ'անդրադառնայ իր ուսանողական տարիներուն ու անոնց բարեգործ ազդեցութեան, կու գայ քով-քովի ոգեկոչելու յիշատակը իր բարերարներուն ու վառ պահելու աշխարհագրական ու տարիքի հեռաւորութիւն չճանցնող «ընտանեկան» կապը:

Երախտագիտութեամբ ու սիրով՝ միշտ պիտի դառնանք ետեւ անգուգական Մելքոնեան բարերարներուն յղացած լուսոյ տաճարին մէջ ապրած մեր օրերուն, այն օրերուն՝ որ դրոշմեցին մեր կեանքը ամենէն դրական փորձառութիւններով ու կերտեցին լաւ Հայն ու լաւ մարդը:



Blue Cross of California takes the worry out of health care.

Our goal is to make staying healthy easier with a variety of affordable plans to fit your needs. For over 65 years, Blue Cross has been a leader in California offering quality health care coverage with over 41,000 doctors and 400 hospitals in our network. We offer:

- Prescription Drug Coverage
- Individual and Family Plans
- Plans for Small Businesses
- Dental Coverage
- Medicare Supplement Plans
- Life Insurance by BC Life & Health Insurance Company
- HSA-Compatible Plans by BC Life & Health Insurance Company
- Integrated Workers' Compensation by Employers Compensation Insurance Company

Call now and let me help take the worry out of your health care!

HARUT DER-TAVITIAN

Authorized Independent Agent

1807 W GLENOAKS BLVD. #202

GLENDAL, CA 91201

(818) 502-3233

HARUT@EXCELHYE.COM

WWW.EXCELHYE.COM

CA Insurance

License #0B28270



The Power of Blue.™

Blue Cross of California (BCC) and BC Life & Health Insurance Company (BCL&H) are Independent Licensees of the Blue Cross Association (BCA). The Power of Blue and the Blue Cross name and symbol are registered service marks of the BCA. ©2005 BCC. CAN119

ԲԱՑՈՒԱԾ Է

Հիպնոսաբուժութեան կեդրոն
ղեկավարութեամբ՝

Փորձառու բժիշկ Արթին Սաղրեանի
Փասատինայի մէջ

Ամէն օր՝ առաւօտեան ժամը 10:00էն մինչեւ կ.ե. ժամը 3:00

Հասցէ՝ 1060 N. Allen Ave. 2nd floor Unit E
Pasadena CA 91104

Հեռախօս (818) 434-8118 միայն ժամադրութեամբ

ՄԱՐԶԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ ԷՊՈՒԱՐԴ ՄԱՐԳԱՐՈՎԻ ՂԵԽԱՒՈՐՈՒԹԵԱՄԲ «ԿԻԼԻԿԻԱ»Ի ԱՌԱՋԻՆ ՅԱՂԱՆԱԿԸ

Ֆուտպոլի Հայաստանի առաջնության 7-րդ տուրում ետնապահ «Կիլիկիա»-ն իր առաջին յաղթանակը տոնեց՝ հիւրընկալուելիս երկու անպատասխան գնդակ ուղարկելով «Շիրակ»-ի դարպասը:

Մինչ այս անցկացրած բոլոր 6 խաղերում թիմը պարտութիւններ էր կրել սեփական դարպասը ընդունելով 20 գնդակ, որից յետոյ թիմի գլխավոր մարզիչ Երուսեակ Կրեանը հրաժարական էր տուել: Օրերս «Կիլիկիա»-ի գլխավոր մարզիչ էր նշանակուել էր Վարդապետ Մարգարովը, որի գլխավորութեամբ թիմը անցկացնելով առաջին հանդիպումը Գիւմրիում յաղթեց «Շիրակ»-ին: Վերջինս ընթացիկ առաջնութիւնում բաւական յաջող է հանդէս գալիս եւ հանդիսանում էր այս խաղի բացառապէս ֆավորիտը, սակայն 11-րդ եւ 28-րդ րոպէից ետեւ հիւրերի խիստ գնդակները գիւմրեցիներին զրկեցին նոյնիսկ միակուր վաստակելու հնարաւորութիւնից:

Վերջապէս յաղթանակ տարաւ նաեւ «Ուլիս»-ը, որը 1:0 հաշուով առաւելութեան հասաւ Կապանի «Գանձասար»-ի նկատմամբ եւ հեռացաւ նախափերջին 7-րդ հորիզոնականից:

Այս տուրի «Արարատ» - «Փիւնիկ» եւ «Բանանց» - «Միկա» հանդիպումները յետաձգուել են, քանի որ այս ակումբներում հանդէս եկող մի շարք ֆուտբոլիստներ ներկայումս հաւաքականի կազմում մասնակցում են ընկերական հանդիպումների:

7-րդ տուրից յետոյ մրցաշարային աղիւսակը ունի այսպիսի տեսք.

	Խաղ	Ցուց.	Հաւ.	Պարտ.	Կօլ	Կէտ
«Արարատ» Երեւան	6	6	0	0	15-3	18
«Միկա» Աշտարակ	5	4	0	1	11-4	12
«Փիւնիկ» Երեւան	5	3	1	1	6-3	10
«Շիրակ» Գիւմրի	6	3	0	3	6-8	9
«Բանանց» Երեւան	5	2	1	2	5-4	7
«Ուլիս» Երեւան	7	2	0	5	4-6	6
«Գանձասար» Կապան	7	1	2	5	7-11	5
«Կիլիկիա» Երեւան	7	1	0	6	5-20	3

ՖՈՒԹՊՈՒԼԻ ԸՆԿԵՐԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆ - ՄՈՒՂՈՎԱ 2-2

Գերմանիայի Տիրասպոլում քաղաքում կայացաւ ֆուտբոլի ընկերական հանդիպում Մոլդովայի եւ Հայաստանի ազգային հաւաքականների միջեւ:



Առաջինը յաջողութեան հասան հայ ֆուտպոլիստները. 25-րդ րոպէին Լեւոն Պաշաջեանի փոխանցումից յետոյ հաւաքականում իր առաջին խաղը անցկացնող Մարկոսը մօտ տարածութիւնից գրաւեց մրցակցի դարպասը: 5 րոպէ անց Բուգաեւը կարող էր խիստ պատասխան գնդակը, սակայն իր բարձրութեան վրայ էր դարպասապահ Գէորգ Կասպարովը: 42-րդ րոպէին Արարատ Առաքելեանը Հայաստանի հաւաքականի տուգանայինում փորձելով հեռացնել գնդակը, այն ուղարկեց մեր ընտրանու դարպասը եւ հաշիւը այս ինքնագոլի շնորհիւ հաւասարուեց:

2-րդ կէսը յաջող սկսուեց Հայաստանի հաւաքականի համար: 53-րդ րոպէին Լեւոն Պաշաջեանը խլելով գնդակը մրցակցի պաշտպանից ներխուժեց տուգանային հրապարակ եւ գեղեցիկ հարուածով գրաւեց Մոլդովայի հաւաքականի դարպասը: Հայ ֆուտպոլիստները ընդամէնը 20-րոպէ կարողացան պահպանել յաղթական հաշիւը: 73-րդ րոպէին Սերգէյ Ալեքսեւը օգտուելով մեր ընտրանու դարպասապահի եւ պաշտպանների անփոյթ խաղից հաւասարեցրեց հաշիւը: Հանդիպումը աւարտուեց 2:2 հաշուով:

ՀԱՅԱՍՏԱՆ - ՅՈՒՆԱՍՏԱՆ 0-0

Ֆուտպոլի Հայաստանի ազգային հաւաքականը հերթական ընկերական հանդիպումը անցկացրեց՝ այս անգամ հանդիպելով Եւրոպայի ախոյեան Յունաստանի հաւաքականի հետ: Գերմանիայի Օֆենբախ քաղաքում կայացած հանդիպումը աւարտուեց գոյազուրկ ոչ-ոքիով: Թէեւ հանդիպումը ընկերական էր, սակայն այն անցաւ բաւական թէժ եւ ինչ-որ տեղ նաեւ կոպիտ պայքարում:



Առաջին ուշալ գոյախին պահը ստեղծուեց 15-րդ րոպէին, երբ Լեւոն Պաշաջեանը առաջ անցնելով Կիրիակոսից՝ մեն-մենակ դուրս եկաւ Նիկոպոլիդիսի դէմ, սակայն նրա հարուածից յետոյ փորձառու դարպասապահ փրկեց իր թիմին: Յոյները յաջողութեան հասնելու լաւ հնարաւորութիւն ունեցան 36-րդ րոպէին, երբ Կասպարովը գնդակը որսալու անյաջող փորձ կատարեց եւ իրարիտեսաւ չկարողացաւ գրաւել անպաշտպան դարպասը: Ընդմիջմանը Յունաստանի հաւաքականի գլխավոր մարզիչ Օտտօ Ռեհագելը միանգամից 5 փոփոխութիւն կատարեց, սակայն դա էլ չօգնեց յոյներին յաղթել այս խաղում: Եկրորդ կէսում հիմնականում հաւասար պայքար ծաւալուեց եւ ինչպէս եւ առաջինում դարպասի գրաւում չարձանագրուեց:

ՓԵՔԻՆ-2008 ՈՒՂԵԳԻՐ Է ՆՈՒԱԾԵԼ 23 ՄԱՐԶԻԿ 7 ՄԱՐԶԱԶԵԿԵՐՈՒՄ

Օլիմպիական վարկանիշային մրցումները գրեթէ աւարտուել են եւ արդէն պարզ է, թէ Հայաստանը ինչ կազմով է մեկնելու 2008թ. Փեքինի օլիմպիական խաղերին: Պաշտօնական նման իրաւունք ունի 23 մարզիկ, որոնց հնարաւոր միանան եւս 1-2-ը, սակայն ՄՕԿ-ի կողմից «սպիտակ քարտ» ստացողները խաղերին մասնակցում են պարզապէս մասնակցելու համար: Իսկ ահա ուղեգիր նուաճած 23 մարզիկներից մեծ մասը մեղալ նուաճելու մտադրութեամբ են մեկնելու մրցավայր:



ԾԱՆՐԱՄԱՐՏ - Այս մարզաձեւի Հայաստանի հաւաքականը Եւրոպայի վերջին 2 առաջնութիւններում բաւական յաջող հանդէս եկաւ նուաճելով մեծ թուով մեղալներ: Օլիմպիական խաղերին մասնակցելու իրաւունք են ստացել 5 հայ ծանրորդներ եւ մէկ ծանրորդուհի: Ծանրամարտում ուղեգրեր տրուում են ընդհանուր հաւաքականին, իսկ կազմը որոշում է մարզիչը: Սակայն ակնյայտ է, որ հիմնական կազմում տեղ կ'ունենան Գէորգ Դաւթեանը եւ Արա խաչատրեանը, որոնք հանդէս են գալիս 77 կգ քաշային կարգում, երկու Տիգրան Մարտիրոսեանները, որոնցից մէկը Ելոյթ է ունենում 69 կգ քաշային կարգում, իսկ միւս՝ 85 կգ-ում: Այս մարզիկները յատկապէս յաջող են հանդէս եկել Եւրոպայի առաջնութիւններում, իսկ աշխարհի առաջնութիւնում Գէորգ Դաւթեանը դարձել է փոխ-ախոյեան:

Կանանց պայքարում հանդէս կը գայ Եւրոպայի ախոյեան Մելինէ Դաւիթեանը, որից եւս սպասելիքները մեծ են:

ԸՄԲԵՄԱՐՏ - Յունա-հռոմէական եւ ազատ ոճի Հայաստանի հաւաքականի ըմբիշները միասին 9 ուղեգրի արժանացան, որոնցից 6-ին տիրացան յունա-հռոմէական ոճի հաւաքականի անդամները: Այս ոճում մեր ըմբիշները կը պայքարեն բոլոր քաշերում բացառութեամբ 96 կգ-ի: Մեծ են սպասելիքները գերծանր քաշային Եւրոպի Պատրիկեւելից: Ռուս լեգէտները 2007թ. Պաքուում կայացած աշխարհի առաջնութիւնում դարձաւ պրոնզէ մեղալակիր, իսկ 2008թ. Եւրոպայի առաջնութիւնում նուաճեց ախոյեանի կոչումը:

Պայքարի մէջ կը մտնեն նաեւ 55 կգ քաշային Ռոման Ամոյեանը, 60 կգ կարէն Մնացականեանը, 66 կգ Արման Արիկեանը, 75 կգ Լեւոն Զուլֆալակեանը, 84 կգ Դենիս Ֆորովը: Ազատ ոճայիններից հանդէս կը գան 60 կգ Մարտին Բերբերեանը, 66 կգ Սուրէն Մարկոսեանը, 84 կգ Յարութիւն Ենոքեանը:

ԲՈՅՔԱՄԱՐՏ - Փեքինում հանդէս կը գան Հայաստանի 4 մարզիկներ: 48 կգ քաշային Յովհաննէս Դանիէլեանը, 60 կգ Հրաչեայ Զաւախեանը, 64 կգ Էդվարդ Համբարձումեանը, 75 կգ Անդրանիկ Յակոբեանը:

ՁԻՒՂՈ - Ձիւղոյում Հայաստանից կը մասնակցեն միանգամից 2 ձիւղորստներ: 60 կգ քաշային կարգում հանդէս կը գայ Յովհաննէս Դաւթեանը, իսկ 66 կգ քաշային կարգում փորձառու Արմէն Նազարեանը:

ՀՐԱԶԳՈՒԹԻՒՆ - Այս մարզաձեւում Հայաստանը մեկ ուղեգիր է նուաճել: Խօսքը փորձառու Նորայր Բախտամեանի մասին է, որը 2004թ. խաղերին գրաւեց 4-րդ հորիզոնականը: Նորայրը պայքարելու է 10 եւ 50 մեթր տարածութիւնից օդամղիչ ատրճանակով անցկացվող մրցումներում եւ հնարաւորութիւն ունի նոյնիսկ նուաճելու 2 մեղալ:

ԱԹԼԵԹԻՔԱ - Օլիմպիական խաղերում հանդէս կը գայ նիզականետորդ Մելիք Զանոյեանը: Գիւմրեցի այս մարզիչը վերջին տարիներին մարզում է Ռուսաստանում:

ՊԱՔԵԹՊՈՒԼԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ԵՒ ԿԱՆԱՑ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Գիւմրիում աւարտուեց պայքարի Հայաստանի տղամարդկանց եւ կանանց առաջնութիւնների 2-րդ շրջանը: Տղամարդկանց պայքարում կրկին յաջող հանդէս եկաւ «Պոլիտեխնիկ»-ը, որը առաջմ միակուր չի կորցրել: «Ճարտարագէտները» հեշտութեամբ առաւելութեան հասան ՖԻՄԱ-ի, «Արցախ»-ի եւ «Գիւմրի»-ի նկատմամբ, իսկ ահա «Արբալիտ-ՖԻՄԱ»-ի հետ հանդիպումը անցաւ բաւական լարուած պայքարում: Ի վերջոյ, առաջատարը յաղթեց 84:77 հաշուով: Իր հերթին «Արբալիտ - ՖԻՄԱ»-ն ինդիւրներ չունեցաւ միւս թիմերի հետ պայքարում:

Կանանց պայքարում Գիւմրու մանկավարժական ինստիտուտը՝ ԳՄԻ-ն, կարողացաւ հաւասարուել «Գրանդ Քենդիին»: Առաջին շրջանում այս թիմերի պայքարում յաղթել էր «Գրանդ Քենդին», սակայն Գիւմրիում ԳՄԻ-ին ունեանչի հասաւ 75:68 հաշուով:

Տղամարդկանց եւ կանանց առաջնութիւններում առաջին 4 հորիզոնականները գրաւած թիմերը պայքարը կը շարունակեն փլէյ-օֆֆում, որը կը կայանայ 2008թ. Սեպտեմբերին:

Տղամարդիկ	Կանանց
Մրցաշարային աղիւսակ	Մրցաշարային աղիւսակ
1. Պոլիտեխնիկ 16	1. ԳՄԻ 15
2. Արբալիտ-ՖԻՄԱ 14	2. Գրանդ Քենդի 15
3. Գյումրի 12	3. Արցախ 12
4. Արցախ 10	4. Արարատ 10
5. ՖԻՄԱ 8	5. ՖԻՄԱ 8

ՀԱՅՐԵՆԱԿԵՐՏ ՍԿՁԲՈՒՆՔՆԵՐ, ՀԱՅՐԵՆԱՔԱՆԴԻՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Շարունակում է 5-էն

փոսած եւ այլասեռած վարչախումբին ամբողջական հեռացումը եւ անոր փոխարինումը՝ վերածնած եւ արթնացած ժողովուրդի առողջ ու զիտակից ուժերով: Ժողովրդավարութեան այս նորաստեղծ քառերկրը մեծ պարտականութիւնն ունին վճռական գորաշարժի ենթարկելու երկրին տրամադրելի մարդու իր բոլոր բաղկացուցիչներով - ամենէն առաջ՝ նոր յառաջանալիք ժողովրդավար իշխանութիւնը եւ նոյնքան ժողովրդավար նոր ընդդիմութիւնը: Ներքին

ուժերու առաջնային ամրապնդումէն ետք, նոր իշխանութիւններու կարեւորագոյն առաջադրանքը պիտի ըլլայ՝ մշակել արտաքին տուրքային քաղաքականութիւն մը: Ասիկա պիտի ապահովէ Հայաստանի բնականոն յարաբերութիւնները տարածաշրջանի հարեւան երկիրներուն հետ: Անգամ մը որ առողջ հունին մէջ տեղադրուի մեր ներքին վերածնունդի երթը, տարածաշրջանն ընդգրկող արտաքին չափող քաղաքականութեան մշակումն ու կենսագործումը վճռական գործօններ պիտի հանդիսանան մեր գոյատեւման ճամբուն վրայ:

ՇՆՈՐԱԿԱԼԻՔ

Պրն. Յովսէփ Ասատրեան եւ զուակները շնորհակալութիւն կը յայտնեն բոլոր անոնց որոնք մասնակից եղան սիրեցեալ տիկնոջ եւ մօր Անժէլ Ասատրեանի մահուան սուգին, այցելութիւններով եւ փոխան ծաղկեպակի նուիրատուութեամբ, հեռագիրներով եւ կամ հեռաձայններով:

Առ այդ \$200 կը նուիրեն «Մասիս»ին:

ԱՊԱՔԻՆՈՒՄ

Ընկ. Ժիրայր Կիրակոսեան վերջերս անակնկալ հիւանդանոց փոխադրուած է անհագատութեան պատճառով: Քանի մը օր հիւանդանոց մնալէ ետք՝ այժմ ան հնազատեան շրջան կը բոլորէ:

Արագ ապաքինում կը մաղթենք մեր սիրելի ընկերոջ:

ՇՆՈՐԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Ներկայիս շնորհակալութիւն կը յայտնեմ անուանի վիրաբույժ բժիշկ Սիմոն Քէօզկէրեանին, որ յաջող վիրահատութեան ենթարկեց զիս էտփենթիստ հիւանդանոցին մէջ:

Երուանդ Պապայեան

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ... ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ...

Մեծ ժողովրդականութիւն վայելող
Կլէնտէլի AMGA 280-րդ Ալիքը
Այժմ կը Սփոռի
GlobeCast

Արբանեակային Հեռատեսիլով
Ամերիկայի, Գանատայի եւ Մեքսիկոյի
Ամբողջ Տարածքին
Դուք Կրնաք Դիտել
Հայաստանեան Լուրեր
Քաղաքական Վերլուծութիւններ
Երաժշտական Հաղորդումներ
եւ այլն

Մանրամասնութիւններու Համար
Հեռաձայնել 818.547.9696

ՏԻՄԱՐՈՒԹԵԱՆ ԿԱՆԽԱՎԱՐԿԱԾ

Շարունակում է 2-էն

ճակի նկարագրութիւնը, բայց բաւարարուենք այսքանով: Մենք վստահ ենք, որ Տէր-Պետրոսեանն այնքան մեծահոգի կը գտնուի, որ անյապաղ կը հրաժարուի իրեն «ձեռնտու» վիճակից եւ կը համաձայնի այս տարբերակին: Այնպէս որ, ի գործ, իշխանաւորներ ու

իշխանասուկներ. գնացէք ծեծուէք, կալանաւորուէք, դատուէք, հետապնդուէք: Մի՛ վարանէք, մի՛ յապաղէք, չէ՞ որ մէջաջն այդ դէպքում, ձեր տրամաբանութեամբ, կը ստացուի, որ Մարտի 1-ը ձեռնտու է Սերժ Սարգսեանին. էլ ե՞րբ է այսքան պատեհ առիթ լինելու ձեր նուիրուածութիւնը նրան ի ցոյց դնելու համար:

ՔԱՋ ՆԱԶԱՐ ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ՇՕ

Ամէն Կիրակի Երեկոյեան
Ժամը 10:00-ից 12:30
Կլէնտէլի 280-րդ Կայանից

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ

ՇՆՈՒՍՏԱՏԵՍԻԼԻ ՅԱՅՏԱԳԻՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՅՈՅՅԸ
CHARTER CABLE 280-ՐԴ ԿԱՅԱՆ
(ԿԼԵՆՏԷՅԼ, ՊԸՐՊԵՆՔ, ԼԱ ԲՐԵՍԵՆԹԱ)
GLOBACAST SATELLITE
ՀԻՆԳՇԱԲԹԻ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԸ 10:00-11:00

Հայ Թելեժամը կը վերադառնայ 18րդ Ալիքի վրայ

Ոչ թէ մէկ, ոչ թէ 2, ոչ թէ 3 ժամ, այլ Օրուան 24 ժամերը
Շարաքը 7 օր անվճար
Հարկ չկայ բաժանորդագրուելու - 40 Յաւելեալ ալիքներ
Յաւելեալ տեղեկութիւններու համար դիմել
Հայկական Թելեժամ (818) 982-2400

The Armenian Teletime Is Back On Channel 18

Not 1 Hour, Not 2 Hours, Not 3 Hours But 24 Hours Per Day
7 Days Per Week, Free
No Subscription Fee - Plus 40 Additional Channels
For info call The Armenian Channel (818) 982-2400

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly
Enclosed a check for (one year)
* \$50,00 for USA

* \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada.

* \$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overseas.

Name: -----

Address: -----

City: ----- State:----- Zip Code:-----

Country: -----

Tel :----- Fax :-----



INVESTMENT BANKING

JACK KALANJIAN

Professional Financial Advisor

Corporate Center Pasadena
225 So. Lake Avenue
Pasadena, CA 91101
(626) 396-2825 Direct
(626) 376-4665 Fax
jack_kalanjian@ml.com

"Helping the Armenian Community Build Wealth"

Գրառուած Թուական Mark Your Calendars

Հայաստանի Անկախութեան Օրուայ ՓԱՌԱՏՕՆ

Սեպտեմբեր 21, 2008

SUNDAY	MONDAY	TUESDAY	WEDNESDAY	THURSDAY	FRIDAY	SATURDAY
	1	2	3	4	5	6
7	8	9	10	11	12	13
14	15	16	17	18	19	20
21	22	23	24	25	26	27
28	29	30				

Armenian Independence Day FESTIVAL

**To reserve your booth
please call Nor Serount Cultural Association**

Ձեր կրպակները ապահովելու համար

Հեռաձայնեցէք Նոր Սերունդ Մշակութային Միութեան

(818) 391-7938